



political
dialogue

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳԱՂԱԾԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՍՏ ԻՐԵՆՑ ԾՐԱԳՐԵՐԻ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



political
dialogue

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՍՏ ԻՐԵՆՑ ԾՐԱԳՐԵՐԻ**

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2020

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրականացվել է հայաստանյան եւ համաեվրոպական կուսակցությունների քաղաքական ծրագրերի համեմատություն՝ հայաստանյան կուսակցությունների ծրագրերում արտահայտված գաղափարախոսությունների բացահայտման նպատակով:

Հետազոտությունը իրականացվել է «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության նախաձեռնությամբ և Նիդերլանդների Թագավորության ԱԳՆ-ի ֆինանսական աջակցությամբ:

Հետազոտությունում արտահայտված տեսակետները հեղինակին են եւ պարտադիր չէ, որ համընկնեն «Քաղաքական երկխոսություն» կազմակերպության եւ Նիդերլանդների Թագավորության ԱԳՆ-ի տեսակետներին:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Էդգար Վարդանյան

Քաղաքագետ, հետազոտող

Էդգար Վարդանյանն ավարտել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ասպիրանտուրան՝ ստանալով հետազոտող-դասավանդողի որակավորում: Նա ստացել է քաղաքագիտության մագիստրոսի աստիճան ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնից: Նրա գիտական հետաքրքրության թեմաներն են՝ ժողովրդավարության տեսությունը, ժողովրդավարացման գործընթացները, քաղաքացիական դիմադրությունը, Հայաստանի ներքին քաղաքականությունը, քաղաքական գաղափարախոսությունները: Այդ թեմաներով մի քանի հետազոտությունների հեղինակ է: Որպես անկախ քաղաքական վերլուծաբան՝ Էդգար Վարդանյանը համագործակցել է մի շարք տեղական եւ միջազգային առաջատար հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումներ.....	4
2. Նախաբան	5
3. Հետազոտության մեթոդաբանությունը	7
4. Հետազոտության նպատակը.....	9
5. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	10
6. «Բարգավաճ Հայաստան» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները.....	23
7. «Լուսավոր Հայաստան» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները.....	33
8. Հայաստանի հանրապետական կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	46
9. «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	52
10.«Սասնա ծռեր» համահայկական կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	61
11. «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	71
12.«Ժառանգություն» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	76
13.«Հայ ազգային կոնգրես» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները	81
Ամփոփում	99
Հավելված 1. Հայաստանյան կուսակցությունների գաղափարախոսությունները	101
Հավելված 2. Հայաստանյան կուսակցություններ vs համաեվրոպական կուսակցություններ	101

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԲՀԿ «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
- ԵԱԺԴ Եվրոպայի ազատականների եւ ժողովրդավարների դաշինք
- ԵԴԿ Եվրոպական դեմոկրատական կուսակցություն
- ԵԺԿ Եվրոպական ժողովրդական կուսակցություն
- ԵԿԿ «Եվրոպայի կանաչներ» կուսակցություն
- ԵԶԿ Եվրոպական ձախերի կուսակցություն
- ԵՊԲԿ Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն
- ԵՍԿ Եվրոպական սոցիալիստների կուսակցություն
- ԵԲԲՇ Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում
- ԺԿ «Ժառանգություն» կուսակցություն
- ԻԺԿ «Ինքնություն եւ ժողովրդավարություն» կուսակցություն
- ԼՀԿ «Լուսավոր Հայաստան» կուսակցություն
- ՀԱԿ «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն
- ՀՀԿ Հայաստանի հանրապետական կուսակցություն
- ՀՅԴ «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն
- ՍԾՀԿ «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն
- ՔՊ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն
- ՔՈՍԴԿ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն

2. ՆԱԽԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհում շարունակվում է քաղաքական գաղափարախոսությունների արդիականության վերաբերյալ դեռեւս 20-րդ դարի 60-ականներից ընթացող բանավեճը: Վերջինս իր յուրօրինակ արտացոլումն ունի նաեւ հայաստանյան քննարկումներում: Եթե ոմանք նշում են, որ քաղաքական գաղափարախոսությունները հնացած, արհեստական երեւոյթ են, մյուսները համոզված են, որ առանց քաղաքական գաղափարախոսությունների հնարավոր չէ ունենալ առողջ կուսակցական համակարգ, ծավալել իրական քաղաքական պայքար: Չընկղմվելով այդ բանավեճի մեջ՝ նշենք, որ անկախ սուբյեկտիվ հայտարարություններից յուրաքանչյուր կուսակցության ծրագրերում առկա են եւ չեն կարող առկա չլինել գաղափարական բնույթ ունեցող դրոյթներ եւ այդ դրոյթների վերլուծությունը թույլ է տալիս առնվազն բացահայտել, թե այս կամ այն կուսակցության գաղափարական դրոյթներն ինչ տեսակի քաղաքական գաղափարախոսությանն են մոտ:

Հարկ է նաեւ նշել, որ տարածված պրակտիկա է, երբ դեմոկրատական պետությունների կուսակցություններից շատերը հայտարարում են իրենց գաղափարախոսության մասին: Դա բնորոշ է նաեւ գրանցված համաեվրոպական կուսակցություններին, որոնք, ըստ էության, ներկայացնում են ակտուալ հիմնական քաղաքական գաղափարախոսությունների գրեթե ողջ սպեկտրը: Համաեվրոպական կուսակցությունները այն կուսակցություններն են, որոնք ստեղծված են համաեվրոպական մակարդակում եւ գործում են Եվրամիության ինստիտուտների ներքո:

Հարկ է նշել, որ գիտական, փորձագիտական համայնքում կա հարաբերական կոնսենսուս համաեվրոպական կուսակցությունների քաղաքական գաղափարախոսությունների բնութագրի վերաբերյալ եւ այդ կուսակցություններից շատերի գաղափարախոսական ինքնագնահատականը, հիմնականում, համընկնում է վերոնշյալ համայնքի կողմից այդ կուսակցությունների գաղափարախոսություններին տրվող գնահատականներին:

Ըստ էության, համաեվրոպական կուսակցությունները կարող են լավ

ուղեցույց հանդիսանալ քաղաքական գաղափարախոսությունների ուսումնասիրման համար: Այս առումով հատկապես արդյունավետ կարող են լինել նրանց նախընտրական ծրագրերը, որոնցում լավագույնս արտացոլված են լինում կուսակցությունների գաղափարախոսական հիմքերը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ քաղաքական գաղափարախոսությունների բացահայտմանն ուղղված հետազոտություններ իրականացնելիս, մենք կարող ենք հիմնվել հետևյալ հետազոտական տրամաբանության վրա՝ եթե օրինակ, հաստատված է, որ X համաեվրոպական կուսակցությունը սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսություն ունի, դա նշանակում է, որ այդ կուսակցության գաղափարական բնույթ ունեցող ծրագրային դրույթները բնորոշ են սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսությանը, ուստի եթե Y կուսակցության գաղափարական բնույթ ունեցող ծրագրային դրույթները մեծամասամբ նույնական են կամ մոտ են X համաեվրոպական կուսակցության գաղափարական բնույթ ունեցող ծրագրային դրույթներին, ապա Y կուսակցությունը սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության կրող է կամ, առնվազն, Y կուսակցությանը ավելի շատ հարազատ են հենց սոցիալ-դեմոկրատական գաղափարները: Այլ կերպ ասած, համաեվրոպական կուսակցությունների նախընտրական ծրագրերը կարող են յուրօրինակ «anchor text»-եր հանդիսանալ կուսակցությունների գաղափարախոսությունները բացահայտելու համար: Սույն հետազոտությունը մի շարք ակտիվ հայաստանյան, առնվազն ֆորմալ առումով, կուսակցությունների ներկայացրած ծրագրերի եւ դրանք համաեվրոպական կուսակցությունների ծրագրերի հետ համեմատելու միջոցով առաջինների քաղաքական գաղափարախոսությունները բացահայտելու փորձ է: Պետք է նկատել, որ այս հետազոտությունը հավակնում է բացահայտել հետազոտության առարկա հանդիսացող հայաստանյան կուսակցությունների, այսպես ասած, «դե յուրե» գաղափարախոսությունները: Պետք է հաշվի առնել, որ այն, ինչ արտացոլված է կուսակցությունների ծրագրերում, կարող է եւ չհանդիսանալ կուսակցության «դե ֆակտո» գաղափարախոսական

ուղենիչը՝ կուսակցությունները կարող են կոնկրետ քաղաքական վարք դրսևորելիս հանդես գալ իրենց ծրագրերում նշված գաղափարներին հակառակ տրամաբանությամբ: Իհարկե, նման իրավիճակը կվկայի կուսակցությունների անազնվության մասին, սակայն դա արդեն այլ թեմա է: Հարկ ենք համարում նաեւ ընդգծել, որ կուսակցությունների ծրագրերում տարբեր պատճառներով կարող են ներառված չլինել մի շարք ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ կուսակցությունների մոտեցումները, ինչը, բնականաբար, կարող է մեծապես դժվարացնել նրանց գաղափարախոսության բացահայտման աշխատանքները:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտությունը իրականացվել է քաղաքագիտության եւ լեզվաբանության մեջ կիրառվող հետեւյալ մեթոդներով. տեքստի ընդհանուր գնահատում (holistic grading) եւ համեմատական որակական վերլուծություն:

Համեմատական վերլուծության համար «շաբլոններ» (anchor text) ձեւավորելու նպատակով որպես դիտարկվող օբյեկտներ են ընտրվել Եվրոպայում 2019թ.-ի ընտրությունների ժամանակ համաեվրոպական կուսակցությունների (political party at European level) կողմից ներկայացված նախընտրական ծրագրերը:

Տեքստերի ընդհանուր գնահատման մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել են 9 կուսակցության (գրանցված 10 եվրոպական կուսակցություններից մեկը ոչ ավանդական, յուրահատուկ նպատակներ ունեցող ռեգիոնալ կուսակցություն է եւ այդ պատճառով չի դիտարկվել մեր կողմից) նախընտրական ծրագրերը: Համաեվրոպական կուսակցությունների գաղափարախոսությունների բնութագրերը նշելիս օգտագործվել է Վոլֆրամ Նորդսիկի «Կուսակցությունները եւ ընտրությունները Եվրոպայում» հետազոտական ռեսուրսը¹:

Յուրաքանչյուր դիտարկվող կուսակցության նախընտրական

1 Nordisiek, Wolfram. "Parties and Elections in Europe". parties-and-elections.eu.

ծրագրից դուրս են բերվել մի շարք բառեր, բառակապակցություններ եւ նախադասություններ, որոնք, երբեմն որոշակիորեն խմբագրված տեսքով, բաշխվել են ըստ հետեւյալ երեք խմբերի՝ ա) կուսակցության կողմից որպես հիմնարար խնդիրներ, բացասական երեւոյթներ դիտարկվող հարցերը, բ) կուսակցության կողմից որպես դրական երեւոյթ, դրական արժեք գնահատվող հարցերը եւ գ) կուսակցության կողմից որպես նպատակ հռչակած առանցքային ծրագրային մի շարք դրոյթները:

Որպես դիտարկման օբյեկտներ են ընտրվել նաեւ 9 հայաստանյան կուսակցություն՝ երեք խորհրդարանական կուսակցություններ՝ «Քաղաքացիական պայմանագիր», «Բարգավաճ Հայաստան», «Լուսավոր Հայաստան» կուսակցությունները, իսկ արտախորհրդարանական ուժերից ընտրվել են՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը, «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը, «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, «Սասնա Ծռեր» համահայկական կուսակցությունը, «Հայ Ազգային Կոնգրես» կուսակցությունը եւ «Ժառանգություն» կուսակցությունը:

Վերոնշյալ կուսակցությունների ընտրության չափանիշն է՝ վերջին երկու համապետական ընտրություններից առնվազն մեկին մասնակցելը (միայնակ կամ դաշինքով) եւ 2019թ.-ի ընթացքում կուսակցական ակտիվության համեմատաբար բարձր մակարդակը, որը չափվել է երկրի սոցիալ-քաղաքական որեւէ խնդրի վերաբերյալ առնվազն երեք հրապարակային դիրքորոշում ունենալու սկզբունքով:

Ուսումնասիրվել են վերոնշյալ քաղաքական ուժերի ամենավերջին նախընտրական ծրագրերը, իսկ այն դեպքում, երբ կուսակցությունը վերջին անգամ հանդես է եկել դաշինքով, ապա ուսումնասիրվել է կուսակցության ընդհանուր ծրագիրը եւ/կամ դաշինքով մասնակցությանը նախորդող ընտրություններին ներկայացրած կուսակցության նախընտրական ծրագիրը: Հայաստանյան կուսակցությունների ծրագրերը ուսումնասիրվել են նույն մեթոդով, ինչ ուսումնասիրվել են եվրոպական կուսակցությունների ծրագրերը: Այնուհետեւ կատարվել է համաեվրոպական կուսակցությունների նախընտրական ծրագրերի եւ դիտարկվող

հայաստանյան կուսակցությունների ծրագրերի համեմատական որակական վերլուծություն: Արդյունքում բացահայտվել է, թե դիտարկվող յուրաքանչյուր հայաստանյան կուսակցության գաղափարական բնույթ ունեցող դրույթների ամբողջությունը որքանով է մոտ կամ հեռու յուրաքանչյուր համաեվրոպական կուսակցության գաղափարական դրույթներից եւ ըստ այդմ տրվել է դիտարկվող յուրաքանչյուր հայաստանյան կուսակցության գաղափարախոսության մոտավոր բնութագիրը: Հայաստանյան կուսակցությունների գաղափարախոսական բնութագիրը տրվել է ըստ երկչափ ձեւաչափի՝ սոցիալ-տնտեսական բնույթի հարցեր եւ սոցիալ-մշակութային բնույթի հարցեր:

4. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտությունը նպատակ ունի հայաստանյան եւ համաեվրոպական կուսակցությունների քաղաքական ծրագրերի համեմատության միջոցով բացահայտել դիտարկվող հայաստանյան կուսակցությունների ծրագրերում արտացոլված քաղաքական գաղափարախոսությունները:

5. «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



5.1 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորեւ ներկայացրած աղյուսակը կազմված է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարեւորվող խնդիրներ, բացասական երեւոյթներ	Դրական երեւոյթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրոյթներ
Արտագաղթ	Հայության ներուժ	Մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծում
Կոռուպցիա	ՀՀ տարածք	Քաղաքականության եւ բիզնեսի տարանջատում
Բռնություն	Բնակչության թվի կրկնապատկում	Աղքատության հաղթահարում՝ աշխատանքի եւ կրթության քաջալերման միջոցով:
Մենաշնորհներ	Մարդու ազատություն եւ արժանապատվություն	Սեփական անձի վերափոխում

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
Աղքատություն	Ստեղծարար ընդունակություններ եւ կրթություն	Համախառն ազգային արդյունքի ձեւավորման գործում, տնտեսական գործունեության ոլորտում պայմանների ստեղծում՝ գործարար հմտություններ ունեցող առավելագույն թվով մարդկանց ներգրավման համար
Քաղաքական հետապնդում	Ազգային միասնություն	Աշխատատեղերի ստեղծում, աշխատավարձերի բարձրացում
Խտրականություն, տարիքային կամ ցանկացած այլ խտրականություն	Հայրենադարձություն	Հայաստանը չպետք է կատարի ընտրություն արևելքի և արևմուտքի միջև:
Հովանավորչություն	Հոգատար հանրություն	Ժողովրդավարությունը իշխանության խաղաղ, անարյուն, ընտրական ճանապարհով փոփոխությունն է, փոփոխության իրական հնարավորությունը:
Վարչարարական բեռ Գործարարությանը խոչընդոտող կարգավորումներ	Ոչ բռնի, թավշյա, ժողովրդական հեղափոխության արժեքներ	Ուղիղ ժողովրդավարության ինստիտուցիոնալիզացում
Ավելորդ բյուրոկրատիա	Մարդու իրավունքներ	Արտահանմանը, զբաղվածության ընդլայնմանը, աշխատանքի խրախուսմանը միտված ներդրումային քաղաքականություն

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
Գործազրկություն	Իրավունքի գերակայություն եւ օրենքի առաջ բոլորի հավասարություն	Պետական աջակցություն ասոցիացիաների ստեղծմանը եւ կայացմանը եւ հետզհետե տնտեսական կարգավորման պետական գործառույթները հենց տնտեսավարողներին պատվիրակում:
Պարտքերի կուտակում	Քաղաքացիական համերաշխություն	Հարկային եւ մաքսային քաղաքականության պարզեցում
Սոցիալական բեւեռվածություն	Անվտանգություն	շահութահարկի, եկամտային հարկի եւ շահաբաժինների հարկման գործող դրույքաչափերի նվազեցում
Գործազուրկ երիտասարդներ	Ժողովրդի ազատ կամարտահայտում	ՓՄՁ ոլորտում գործունեություն ծավալելու գրավիչ պայմանների ստեղծում:Տարեկան մինչեւ 20 միլիոն դրամ շրջանառություն ունեցող բիզնեսի հարկերից ազատում
Գործազուրկ կանայք	Տնտեսական մրցակցություն	Միջին խավի ձեւավորում
Գործազուրկ ոչ բարձր որակավորում ունեցող աշխատուժ	Տնտեսության ներառական աճ	Հանքարդյունաբերական թափոնների կառավարման եւ շահագործված հանքերի փակման/ռեկուլտիվացիայի ժամանակակից մեխանիզմների կիրառում
Ուռճացված պետական կառավարման համակարգ	Աշխատատեղերի ստեղծում	Հեռուստաթերթի պատշաճ մակարդակի ապահովման ուղղությամբ միջոցների ձեռնարկում

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
Ոչ արդյունավետ, սեռային կարծրատիպերով կայացվող որոշումներ	Կանանց եւ տղամարդկանց իրավահավասարություն	Մեկ անձից գնումների ծավալների կրճատում
Ատելության խոսք	Հզոր պետություն	Հանրության կրթական ցենզի շարունակական բարձրացում

5.2 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/Եվրոպական ձախերի կուսակցություն (Party of European Left)

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագրերում արտացոլված գաղափարական մոտեցումները բացարձակապես չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի ջատագով Եվրոպական ձախերի կուսակցության² ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ:

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ուսումնասիրված ծրագրում բացակայում են Եվրոպական

2 https://www.european-left.org/wp-content/uploads/2018/11/Manifesto-European-Left_ENG.pdf

ձախերի կուսակցության ծրագրում արտացոլված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, ալտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն:

- «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ուսումնասիրված ծրագրում բացասական երանգով չեն արտահայտված կամ բացակայում են Եվրոպական ձախերի կուսակցության համար բացասական համարվող այնպիսի երեւոյթներ, հասկացություններ կամ ենթադրյալ իրողություններ, ինչպիսիք են՝ կապիտալիստական շահագործումը, կապիտալիստական հասարակությունը, շուկայական արժեքները, նեոլիբերալ քաղաքականությունը, ԱՄՆ հեգեմոնիան, ազատ մրցակցությամբ շուկայական տնտեսությունը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

*«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հիմնականում համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող, կենտրոնամետր **Եվրոպական դեմոկրատական կուսակցության**³ ծրագրում առկա մոտեցումներին:*

- ԲՊ-ի ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են ԵԴԿ-ի ծրագրում նույնպես շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, ազատությունը, սոլիդարությունը, գենդերային հավասարությունը, իշխանությունների տարանջատումը, իննվացիան, տնտեսական

3 <https://2019.democrats.eu/en>

մրցակցությունը, տնտեսական աճի եւ բիզնես մրցակցության խթանումը, ծնելիության խթանումը, կայունությունը, անվտանգությունը, բնապահպանությունը:

- ՔՊ-ի ուսումնասիրված ծրագրում եւ ԵԴԿ-ի ծրագրում որպես առաջնային նշված մի շարք խնդիրներ եւ բացասական երեւոյթներ նույնական են: Դրանք են, օրինակ՝ բյուրոկրատական մեքենան, ոչ ժողովրդավարական երեւոյթները, գործազրկությունը, հատկապես երիտասարդների շրջանում տարածված գործազրկությունը, բոլոր տեսակի խտրականությունը, աղքատությունը, ատելոյթան խոսքը:

Հարկ է նաեւ նշել, որ ՔՊ-ի ծրագրում չկան դրոյթներ, որոնք սկզբունքորեն կհակասեին ԵԴԿ-ի ծրագրում առկա դրոյթներին, նույնը կարելի է խոսել հակառակի մասին:

«Քաղաքացիական պայմանագիր»/«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցոյթան ծրագրերում տնտեսութանը վերաբերող որոշ մոտեցումներ համընկնում են աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցոյթան ծրագրային⁴ դրոյթներին, սակայն բազմաթիվ այլ հարցերի մասով եւ, ընդհանուր առմամբ, կուսակցոյթունների գաղափարական մոտեցումները այնուամենայնիվ տարբեր են:

- Համընկնումների մասով՝ ինչպես ԵԲԲԸ-ն, այնպես էլ ՔՊ-ն կարելորում են ազատ առեւտուրը եւ շուկայական տնտեսութունը, օրենքի գերակայութունը եւ ժողովրդավարութունը, ներդրումները ինովացիոն տնտեսութան մեջ, ներառական տնտեսական աճը, բնապահպանական տնտեսութունը: Երկու կուսակցոյթունների բացասական երեւոյթների ցանկի մեջ

4 https://ecpm.info/ElectionManifesto_A4_40pg.pdf

զգալի տեղ են զբաղեցնում բյուրոկրատական համակարգը եւ գործազրկությունը:

- Սակայն ԵԲԲԸ-ն որպես կարեւորագույն խնդիրներ, բացասական երեւոյթներ է հիշատակել, օրինակ՝ ռադիկալ ձախական ակտիվիստական հասարակական կազմակերպությունները: Նման խմբերը Հայաստանում նույնպես ակտիվ են, սակայն ՔՊ-ի համար դրանք խնդիր չեն համարվում: ՔՊ-ի համար որպես խնդիր չեն դիտարկվել նաեւ ԵԲԲԸ-ի կողմից որպես բացասական երեւոյթներ նշված անհատապաշտ պահպանողական ազատականությունը եւ տեխնոկրատ սոցիալ-դեմոկրատիան: ԵԲԲԸ-ն որպես իր համար կարեւորագույն արժեք նշում է մարդկային արժանապատվության քրիստոնեական մոտեցումը եւ ցուցաբերում է վառ ընդգծված հակակրանք իսլամի վերաբերյալ: Կուսակցությունը նաեւ հատուկ կարեւորում է այսպես կոչված «առողջ եւ ուժեղ ընտանիքը» որպես հասարակության կարեւոր բջիջ՝ հատուկ ընդգծելով, որ ընտանիքը տղամարդու եւ կնոջ միությունն է: ԵԲԲԸ-ի ծրագրում նշվում է, որ ծնողները իրավունք ունեն որոշելու, թե ինչ արժեքային համակարգ են փոխանցելու իրենց երեխաներին: Այս բոլոր դրոյթները չեն համընկնում ՔՊ-ի մոտեցումների հետ, որոնք ավելի ազգակենտրոն են, քան ընտանեակենտրոն, մյուս կողմից էլ՝ ավելի հանդուրժողական են եւ ազատական են:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն)(Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող կենտրոնամետ «Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցությունը⁵ ունեն բազմաթիվ ընդհանրություններ:

5 https://www.aldeparty.eu/sites/alde/files/40-Resolutions/2019_freedom_opportunity_prosperity_the_liberal_vision_for_the_future_of_europe_0.pdf

- Երկու կուսակցություններն էլ իրենց ծրագրերում կարելի էր տեսնել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, մարդու արժանապատվությունը, ժողովրդավարությունը, ազատությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը, անհատակենտրոնությունը: Երկուսն էլ կարելի էր տեսնել տնտեսական մրցակցությունը, տնտեսությանը ներառական աճը եւ թվային իննովացիաները, աշխատատեղերի ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, կոռուպցիայի դեմ պայքարը, քաղաքացիական համերաշխության եւ անվտանգության ապահովման հարցերը, գենդերային հավասարությունը, հանրության կրթական ցենզի բարձրացումը, մարդկանց հմտությունների զարգացումը: Նշված խնդիրների շարքում երկուսի մոտ էլ առանձնահատուկ տեղ են գրավում գործազրկությունը, հատկապես երիտասարդների շրջանում, ատելության խոսքը, բռնությունը: Երկուսն էլ նշում են, որ պետք է բացառվեն քաղաքական հետապնդումները: Երկու կուսակցություններն էլ դեմ են տնտեսական հովանավորչությանը եւ ուռճացված պետական կառավարման համակարգին:

Հարկ է նշել, որ ԲՊ-ն չունի գաղափարախոսական բնույթի այնպիսի դրույթներ, որոնք հակասում են ԵԱԺԴ-ի սկզբունքներին:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն (ԻԺԿ) (Identity and Democracy)

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերը, չնայած որոշ հարցերում համընկնումների առկայությանը, էսպես տարբերվում են միմյանցից:

6 <https://www.id-party.eu/platform>

- Երկու կուսակցություններն էլ մեծ նշանակություն են տալիս կոռուպցիայի դեմ պայքարին, աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը եւ ներդրումների ներգրավմանը: Երկուսն էլ դեմ են ավելորդ բյուրոկրատիային եւ կարելուրում են ազգային միասնությունն ու ինքնուրույնությունը:
- Սակայն ԻԺԿ-ն շեշտադրում է «ընտանեկան արժեքներ» եւ «պատրիոտիզմ» հասկացությունները, բացասական երանգով է հիշատակում միգրանտներին եւ խոսում է պահպանողական եվրոպական արժեքների կարելուրության մասին: Այդ կուսակցությունը խիստ բացասաբար է վերաբերվում եվրոպական առաջնորդներին, ԱՄՆ-ին եւ ցանկանում է ցույց տալ, որ նա ոչ դասական, հակամեյնսթրիմային կուսակցություն է: Այս բոլոր գաղափարները չեն տեղավորվում ՔՊ-ի գաղափարական շրջանակներում, որոնք, ի տարբերություն ԻԺԿ-ի գաղափարների, հանդուրժողական բնույթ ունեն եւ շեշտում են ունիվերսալ ժողովրդավարական արժեքների կարելուրությունը:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն / Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն (European Conservatives and Reformists Party)

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ծրագրային դրույթներում թեեւ կան մի շարք ընդհանրություններ աջակողմյան, ազգային-պահպանողական Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցության⁷ ծրագրի որոշակի սկզբունքների հետ, սակայն որոշ էական գաղափարական հարցերում ՔՊ-ի մոտեցումները տարբերվում են այդ կուսակցության ծրագրում առկա մոտեցումներից:

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են՝ ազատությունը, ազատ մրցակցությունը, մարդու արժանապատվությունը, օրենքի իշխանությունն ու իրավունքի գերակայությունը:

7 https://ecrgroup.eu/vision/protecting_and_respecting_member_states

Երկուսն էլ ցածր հարկերի քաղաքականության կողմնակից են:

- Սակայն ԵՊԲԿ-ն, ի տարբերություն ԲՊ-ի, հանդես է գալիս հանրային ծախսերի խիստ կրճատման, հարստության հարկի վերացման օգտին: Կուսակցությունը հանդես է գալիս ի օգուտ եվրոպական ստանդարտների կրճատման, առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ընտանիքի ինստիտուտին: Միգրացիայի նկատմամբ կուսակցության անհանդուրժողական լեզուն նույնպես չի համընկնում ԲՊ-ի պլյուրալիստական, հանդուրժողական լեզվին:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն / «Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եւ ձախական, ձախ-կենտրոնամետ, կանաչ գաղափարախոսություն ունեցող «Եվրոպայի կանաչներ» կուսակցությունը ունեն բազմաթիվ նույնական դրույթներ, սակայն շատ են նաեւ էապես տարբերվող մոտեցումները:

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ ներառական եւ բարգավաճող հասարակություն, բոլորի համար հավասար իրավունքներ, ազատություն, մարդկային արժանապատվություն, սոցիալական համերաշխություն, փոքր բիզնես, գենդերային հավասարություն, երկարաժամկետ կրթություն: Երկու կուսակցությունների համար հավասարապես առաջնային խնդիրներ են համարվում՝ հատկապես երիտասարդների շրջանում տարածում գտած աղքատությունը, գործազրկությունը եւ անհավասարությունը, խտրականությունը, ատելության խոսքը:
- Սակայն, եթե օրինակ ԲՊ-ն ցածր հարկերի կողմնակից է եւ հանդես է գալիս հարկային դաշտի պարզեցման օգտին, ապա Եվրոպայի կանաչները կարելուրում է «հարկային արդարություն» հասկացությունը եւ մի շարք ոլորտներում

կողմնակից է բարձր հարկերի քաղաքականությանը: Կուսակցությունը առաջ է քաշում հետեւյալ սկզբունքը՝ բարձր հարկեր ամենից անցանկանալի բաների վրա, ինչպիսիք են, օրինակ, բնական ռեսուրսների շահագործումը, աղտոտող արդյունաբերությունը եւ ցածր հարկեր այնպիսի բաների վրա, որոնք ամենից շատն ենք ցանկանում, օրինակ՝ աշխատատեղեր: Եվրոպայի կանաչները, ի տարբերություն ՔՊ-ի, որպես չափազանց բացասական երեւույթներ է նաեւ դիտարկում՝ նեոլիբերալիզմը, կոշտ խնայողությունների քաղաքականությունը, հսկա մուլտինացիոնալ կազմակերպությունները, խոշոր կորպորացիաները, նշելով, որ ձեռնարկատերերը տուժում են վերջիններիս հետ անարդար հարկային մրցակցությունից: Եվրոպական կանաչները նաեւ շատ ավելի խիստ բնապահպանական կարգավորումների կողմնակից է եւ շատ ավելի մեծ տեղ է տալիս սոցիալական իրավունքներին, քան ՔՊ-ն:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եւ ծախկենտրոնամետ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը ունեն մի շարք ընդհանրություններ, սակայն նրանց մոտեցումներում քիչ չեն նաեւ տարբերությունները:*

- Երկու կուսակցություններն էլ կարելի էրում են իրավահավասարությունը, գենդերային հավասարությունը, քաղաքացիական համերաշխությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, իննովացիաները, ներառական հասարակությունը, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեւեռվածության հաղթահարումը, որակյալ կրթությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, տարատեսակ

8 <https://www.pes.eu/en/manifesto2019/>

խտրականության դեմ պայքարը, ատելության խոսքի դեմ պայքարը:

- Սակայն ԵՍԿ-ն, ի տարբերություն ԲՊ-ի, որպես հիմնարար խնդիրներ, բացասական երեւոյթներ է դիտարկում ֆինանսական կապիտալիզմը, կլիմայական փոփոխությունները, քչերի ձեռքբերում հարստության կուտակումը, սուբսիդիարության սկզբունքը, հարկային դրախտը, խիստ խնայողության քաղաքականությունը (austerity): ԵՍԿ-ն որպես իր համար բացասական երեւոյթներ է հատուկ նշում նաեւ աջ-ձախրահեղական ազգայնական պոպուլիզմը, կապիտալի շուկայից կառավարության կախվածությունը:
- ԵՍԿ-ն, ի տարբերություն ԲՊ-ի, նաեւ որպես կարեւորվող կամ/եւ նպատակային եւ դրական երեւոյթներ է դիտարկում՝ սոցիալական շուկայական տնտեսությունը, համընդհանուր բարեկեցության պետությունը, պրոգրեսիվ եւ արդար հարկային համակարգը, ֆիսկալ արդարությունը, ձեռնարկությունների շահույթի արդար բաշխումը բոլոր աշխատողների միջեւ, ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, հիմնարար սոցիալական իրավունքների գերիշխանությունը տնտեսական ազատությունների նկատմամբ, արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը: Այս ամենը եւս բացակայում է ԲՊ-ի ծրագրում եւ չի բխում վերջինիս տրամաբանությունից:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն/Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)

*«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը եւ աջ-կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցությունը** ունեն մի շարք ընդհանրություններ, սակայն քիչ չեն նաեւ տարբերությունները:*

- Երկու կուսակցություններն էլ կարեւոր են համարում բռնության, աղքատության, գործազրկության, ավելորդ

բյուրոկրատիզացիայի դեմ պայքարը: Երկուսն էլ կարելի էր անել կայուն, ներառական տնտեսական աճը եւ տնտեսական մրցակցությունը, ազատությունը եւ մարդու իրավունքները, իրավահավասարությունը եւ քաղաքացիական համերաշխությունը, հավասար հնարավորությունները, իննովացիաները, աշխատատեղերի ստեղծումը, մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացումը:

- Ի տարբերություն ՔՊ-ի, ԵԺԿ-ն առանձին ընդգծում է «լիբերալ դեմոկրատիա» եւ «սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունների կարելիությունը: ԵԺԿ-ն, ի տարբերություն ՔՊ-ի, հստակ քննադատում է այլ իզմերը, մասնավորապես, կոմունիզմը, սոցիալիզմը, ռադիկալ ինվայրնմենթալիզմը, լիբերտարիանիզմը: ԵԺԿ-ն իր ծրագրում հստակ դեմ է արտոններին եւ էվթանազիային եւ ընդգծում է հենց քրիստոնեական արժեքների պահպանության կարելիությունը, ինչպես նաեւ հատուկ ուշադրության է արժանացնում «ընտանիք» եւ «ընտանեկան արժեքներ» հասկացությունները: Այս ամենը բացակայում է ՔՊ-ի ծրագրում եւ առնվազն ուղղակիորեն չի բխում նրա ծրագրի տրամաբանությունից: ԵԺԿ-ն հատուկ ընդգծում է սուբսիդիարության սկզբունքի եւ սոցիալական շուկայական տնտեսության կարելիությունը, սերունդների միջեւ համերաշխության սկզբունքը, ավանդույթների եւ պրոգրեսի միջեւ բալանսի անհրաժշտությունը, համընդհանուր բարիք եւ ճշմարտություն հասկացությունները:

Հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները կարող ենք եզրակացնել, որ ՔՊ-ին առավել մոտ են աջ կենտրոնամտությունը, չափավոր ազատականությունը:

6. «ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



6.1 «Բարգավաճ Հայաստան» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորև ներկայացրած աղյուսակը կազմված է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելի է խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
Անօրինական մենաշնորհներ	Փոքր եւ միջին ձեռնարկատիրություններ	5 տարով մինչեւ 30 մլն շրջանառություն ունեցող ձեռնարկություններին հարկերից ազատում
Արտաբյուջետային ֆոնդեր	Մրցակցային հավասար պայմաններ, խաղի արդար կանոններ	Նոր հակամենաշնորհային օրենքի ներդրում
	Հարկման պրոգրեսիվ սանդղակ	Ներդրումների խթանման քաղաքականության իրականացում
	Մեծ հայրենադարձություն	Հարկերի թվի կրճատում, հարկային բեռի իջեցման քաղաքականություն

Կարելուվող խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
		Գյուղատնտեսությամբ զբաղվողներին համակողմանի պետական աջակցություն
		Վարկային հարաբերությունների համակարգի առողջացում
		0,5-1 տոկոսադրույքներով մեծածավալ վարկային միջոցների տրամադրում
		Պետական աջակցություն արտահանմանը (որոշ կոնկրետ դեպքերում)
		Արագաչափերի եւ կարմիր գծերի վերացում
		Գազի, էլեկտրաէներգիայի սակագների էապես իջեցում
		Առողջապահական համակարգում պետպատվերի սերտիֆիկացում
		Վարկերի եւ դրամաշնորհների միջոցով պետական աջակցություն համապատասխան գիտելիքներ ունեցող ուսանողներին
		Սոցիալական բնակաշինարարության ծրագրի իրականացում
		Տուն կառուցելու նպատակով արտագաղթած հայրենդարձներին անվճար հողերի տրամադրում

Կարելովոլո խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
		Բյուջեի ծախսային մասի 5% ուղղում ռազմա-արդյունաբերության զարգացմանը
		Հայ-ռուսական դաշնակցային հարաբերությունների զարգացում եւ խորացում
		Եվրաինտեգրման գործընթացների կառուցողական մասնակցություն
		Պատմամշակութային կոթողների վերականգնմանն ուղղված միջոցների կտրուկ ավելացում

**6.2 «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/
համաներկրոպական կուսակցություններ**

Ստորեւ կներկայացնենք «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաներկրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/«Եվրոպական ձախերի» կուսակցություն (Party of European Left)

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի,

*կոմունիզմի գաղափարախոսությունների ջարդագով **Եվրոպական ծախերի կուսակցության** ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ:*

- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ուսումնասիրված ծրագրում բացակայում են Եվրոպական ծախերի կուսակցության այն առանցքային դրույթները եւ արժեքները, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, ակտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ծախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն:
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ուսումնասիրված ծրագրում բացասական երանգով չեն արտահայտված կամ բացակայում են Եվրոպական ծախերի կուսակցության համար բացասական համարվող այնպիսի երեւույթներ, հասկացություններ կամ ենթադրյալ իրողություններ, ինչպիսիք են՝ կապիտալիստական շահագործումը, կապիտալիստական հասարակությունը, շուկայական արժեքները, նեոլիբերալ քաղաքականությունը, ԱՄՆ հեգեմոնիան, ազատ մրցակցությամբ շուկայական տնտեսությունը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/«Եվրոպական դեմոկրատական կուսակցություն» (The European Democratic Party)

*«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հիմնականում չեն համընկնում սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետր **Եվրոպական դեմոկրատական կուսակցության** ծրագրում առկա մոտեցումներին:*

- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային չեն դիտարկվել կամ միայն մասամբ են որպես այդպիսին դիտարկվել Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, ազատությունը, սոլիդարությունը,

գենդերային հավասարությունը, իշխանությունների տարանջատումը, իննովացիան, ծնելիության խթանումը, կայունությունը, անվտանգությունը, բնապահպանությունը:

- «Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրերում նշված առաջնային խնդիրների, բացասական երեւույթների շարքում շատ քիչ են համընկնումները:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության ծրագրային դրույթների միջեւ համընկնումներ գրեթե չեն նկատվել:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն)(Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող, կենտրոնամետ «Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցության ծրագրերը քիչ ընդհանրություններ ունեն:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր ասել, որ են տնտեսական մրցակցությունը, աշխատատեղերի ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, կոռուպցիայի դեմ պայքարը:
- Սակայն, ի տարբերություն ԲՀԿ-ի, ԵԱԺԴ-ն իր ծրագրում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում այնպիսի

հարցերին, ինչպիսիք են՝ քաղաքացիական համերաշխությունը, գենդերային հավասարությունը եւ այլն: Իսկ ԲՀԿ-ն նման հարցերի ընդհանրապես չի անդրադառնում: Ի տարբերություն ԲՀԿ-ի, ԵԱԺԴ-ն բացասական երեւոյթների շարքում առանձնահատուկ ուշադրություն է դարձնում աստելոյթան խոսքին, բռնոյթանը եւ այլն, մինչդեռ ԲՀԿ-ի ծրագրում որպէս կուսակցոյթանը անհանգստացնող բացասական երեւոյթներ նշվում են միայն տնտեսական բնոյթի խնդիրները, ինչպիսիք են՝ անօրինական մենաշնորհները, արտաբոյլջետային ֆոնդերը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցոյթան/«Ինքնոյթան եւ Ժողովրդավարոյթան» կուսակցոյթան(ԻԺԿ) (Identity and Democracy)

«Բարգավաճ Հայաստան» կուսակցոյթան եւ ծայրահեղ աջ, ազգային պահպանողական «Ինքնոյթան եւ Ժողովրդավարոյթան» կուսակցոյթան ծրագրերում կան որոշակի համընկնումներ, բայց առկա են նաեւ տարբերոյթաններ:

- Երկու կուսակցոյթաններն էլ մեծ նշանակոյթան են տալիս աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը եւ ներդրումների ներգրավմանը:
- Սակայն ԲՀԿ-ն կողմ է ավելի մեծ պետոյթանը, մինչդեռ ԻԺԿ-ն հանդես է գալիս հնարավորինս փոքր բոյլրոկրատական համակարգի օգտին:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցոյթան/Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցոյթան (European Conservatives and Reformists Party)

«Բարգավաճ Հայաստան» կուսակցոյթան ծրագրային դրոյթները հիմնականում տարբերվում են աջակողմյան, ազգային-պահպանողական Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցոյթան ծրագրում արտացոլված

սկզբունքներից:

- Ի տարբերություն ԲՀԿ-ի, ԵՊԲԿ-ն հանդես է գալիս հանրային ծախսերի խիստ կրճատման, հարստության հարկի վերացման օգտին:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/«Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ ձախ, ձախ-կենտրոնամետր, կանաչ գաղափարախոսություն ունեցող «Եվրոպայի Կանաչներ» կուսակցության ծրագրերում կան որոշակի ընդհանրություններ, սակայն շատ են նաեւ էապես տարբերվող մոտեցումները:

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ բարգավաճող հասարակություն, փոքր բիզնես, հարկման պրոգրեսիվ սանդղակ:
- Սակայն, ի տարբերություն ԲՀԿ-ի ծրագրի, որը ավելի շատ տնտեսական բնույթի հարցերի վրա է կենտրոնացած, «Եվրոպայի Կանաչներ» կուսակցության ծրագրում որպես կարեւոր արժեքներ է դիտարկվում գենդերային հավասարությունը, երկարաժամկետ կրթությունը: Որպես առաջնային խնդիրներ է դիտարկվում՝ անհավասարությունը, խտրականությունը, ատելության խոսքը:
- «Եվրոպայի կանաչներ» կուսակցության ծրագրում, ի տարբերություն «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ծրագրի նաեւ որպես չափազանց բացասական երեւույթներ է դիտարկվում՝ նեոլիբերալիզմը, խիստ խնայողությունների քաղաքականությունը, հսկա մուլտինացիոնալ կազմակերպությունները, խոշոր կորպորացիաները, նշելով, որ ձեռնարկատերերը տուժում են վերջիններիս հետ անարդար հարկային մրցակցությունից: Եվրոպայի կանաչների ծրագրում առաջ է քաշվում խիստ բնապահպանական կարգավորումների քաղաքականությունը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))

*«Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ ծախ-կենտրոնամետր, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող **Եվրոպական սոցիալիստների կուսակցության** ծրագրերում կան մի շարք ընդհանրություններ, սակայն որոշ հարցերում առկա են նաեւ մոտեցումների տարբերություններ:*

- Երկու կուսակցություններն էլ կարելի էրոմ են աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեւեռվածության հաղթահարումը: Երկուսն էլ պրոգրեսիվ հարկային համակարգի կողմնակից են:
- Սական ԵՍԿ-ն, ի տարբերություն Բարգավաճ Հայաստանի, որպես հիմնարար խնդիրներ, բացասական երեւոյթներ է դիտարկում՝ ֆինանսական կապիտալիզմը, կլիմայական փոփոխությունները, քչերի ձեռքերում հարստության կուտակումը, սուբսիդիարության սկզբունքը, հարկային դրախը (havens), խիստ խնայողության քաղաքանակությունը (austerity): ԵՍԿ-ն որպես բացասական երեւոյթներ հատուկ ընդգծում է նաեւ աջ-ձայրահեղական ազգայնական պոպուլիզմը, կապիտալի շուկայից կառավարության կախվածությունը:
- ԵՍԿ-ն, ի տարբերություն Բարգավաճ Հայաստանի, նաեւ որպես կարելի էրոմ կամ/եւ նպատակային եւ դրական երեւոյթներ է դիտարկում՝ ֆիսկալ արդարությունը, ձեռնարկությունների շահույթի արդար բաշխումը բոլոր աշխատողների միջեւ, ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, հիմնարար սոցիալական իրավունքների գերիշխանությունը տնտեսական ազատությունների նկատմամբ, արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը: Այս ամենը եւս բացակայում է Բարգավաճ Հայաստանի ծրագրում եւ չի բխում վերջինիս տրամաբանությունից:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն/«Եվրոպական ժողովրդական կուսակցություն» (European people’s party)

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության եւ աջ-կենտրոնամետ լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցության ծրագրում առկա են մի շարք ընդհանրություններ, սակայն որոշակի հարցերում կա մոտեցումների տարբերություն:**

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր հավասար հնարավորությունները, իննովացիաները, աշխատատեղերի ստեղծումը, մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացումը:
- Սակայն, ի տարբերություն ԲՀԿ-ի, ԵԺԿ-ն կարելի է լիբերալ դեմոկրատիան, հստակ քննադատում է այլ իզմերը, մասնավորապես՝ կոմունիզմը, սոցիալիզմը, ռադիկալ ինվայրընմենթալիզմը, լիբերտարիանիզմը:

Հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները կարող ենք եզրակացնել հետեւյալը՝ զուտ փնտեսական բնույթի խնդիրների նկատմամբ վերաբերմունքի առումով ԲՀԿ-ի գաղափարական մոտեցումները մոտ են սոցիալ-դեմոկրատիային: Սակայն ԲՀԿ-ի ծրագրի գաղափարական սակավությունը եւ բազմաթիվ կարելի հարցերին չանդրադառնալը թույլ չի տալիս հասկանալ նրա մոտեցումները մի շարք կարելիագույն հարցերի վերաբերյալ, ինչը հնարավորություն չի տալիս առնվազն մեր հետազոտության մեթոդաբանության օգնությամբ քիչ թե շատ հստակ բացահայտել կուսակցության գաղափարախոսությունը: Միևնույն ժամանակ, այն հանգամանքը, որ կուսակցությունն իր ծրագրում առանձին չի դիտարկում մարդու իրավունքների հետ կապված տարբեր խնդիրները, չի անդրադառնում ժողովրդավարական պետության կայացման համար անհրաժեշտ մի շարք խնդիրներին, կարող է խոսել այն մասին, որ ԲՀԿ-ն առնվազն առաջնային չի համարում մարդու իրավունքների, ժողովրդավարության հետ կապված խնդիրները եւ այդ պատճառով առնվազն ազատական գաղափարախոսություն ունեցող ուժ չի կարող համարվել:

Իսկ այն, որ կուսակցությունը չի ներկայացնում պետության զարգացմանն ուղղված համակարգված ամբողջական մոտեցումներ եւ կենտրոնացած է տնտեսական բնույթի որոշակի խնդիրների վրա, կարող է խոսել այն մասին, որ կուսակցությունը կազմակերպված է նեղ, յուրահատուկ կոնկրետ խնդիրների շուրջ եւ հեռու է դասական կուսակցություն լինելուց:

7. «ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



7.1 «Լուսավոր Հայաստան» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորև ներկայացրած աղյուսակը կազմված է «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելի է խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
Սովետային տնտեսություն	Առաջադեմ, արդիական քաղաքական համակարգ, ազատական բարեփոխումներ	Հակամենաշնորհային քաղաքականության իրականացում
Աղքատություն	Ժողովրդավարական ներկայացուցչական ինստիտուտներ	Աշխատատեղերի ստեղծման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորում
Սոցիալական բեռնացվածություն	Հավասար հնարավորություններ	Սահմանի վրա ԱԱՀ գանձման վերացում
Անհարկի վարչարարություն	Արժանապատիվ ազգային ինքնության արժեհամակարգ	Թոշակառուների համար պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրում

Կարելով ով խնդիրներ, բացասական երեւոյթներ	Դրական երեւոյթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրոյթներ
Կոռուպցիա	Եվրոպական չափանիշներ	Նպաստառուների աշխատանքի խրախուսում
Հովանավորչություն	Օրենքի գերակայություն	Սկսնակ բիզնեսներին պետական աջակցությամբ ծրագրի ներդրում
Սոցիալական անարդարություն	Սոցիալական արդարություն	Արժեթղթեր թողարկող ընկերություններին հարկային արտոնության տրամադրում
Ոչ նպատակային օժանդակության քաղաքականություն	Բարեկեցիկ և հզոր պետություն	«Կանաչ» տնտեսության զարգացում
Բնական ռեսուրսների գերշահագործում	Հայաստանի ազգային շահեր	Կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորման ավելացում՝ ՀՆԱ նվազագույնը 5 տոկոսի չափով:
	Լիբերալ գաղափարներ	Դեպի արտահանման շուկաներ առկա մուտքի խոչընդոտների վերացում
	Ներառական տնտեսական աճ	Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցություն
	Մակրոտնտեսական կայուն միջավայր	Ներդրողների պաշտպանություն և երաշխիքների տրամադրում
	Իրավունքի գերակայություն	Նորարարության խթանման ռազմավարության մշակում
	Օրինականություն	Հավասարակշիռ, ճկուն և հեռատես արտաքին քաղաքականություն
	Անվտանգություն	Աշխարհաքաղաքական ազդեցություններից, տրամաբանությունից ու Հայաստանի պոտենցիալ դաշնակիցների միջև առկա հակասություններից գերծ մնալու քաղաքականության իրականացում

Կարելուվող խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
	Հավասար մրցակցային միջավայր	Պետական կառավարման մարմինների օպտիմալացում
	Անշարժ գույքի միասնական հարկման արդարացի համակարգ	Պետական աջակցություն որոշակի տիպի ներդրումային ծրագրերին
	Հարկային արձակուրդներ	Արդար և կանխատեսելի միջավայր բիզնեսի և ներդրողի համար
	Հարկային բեռի վերաբաշխում դեպի խոշոր բիզնես՝ միջին և մանր բիզնեսների կամերալ ստուգումներ	Պետական պարտքի կայունացում եւ կրճատում
	Պետական մշակութային գաղափարախոսություն	Արտահանումը որպես տնտեսական աճի կարելուրագույն աղբյուրի դիտարկում
	Ամուր եւ առողջ ընտանիք	Գործընկերային հարաբերությունների հաստատում հարկատուի հետ
		Շքեղության հարկի ներդրում
		Հարկատեսակների քանակի կրճատում
		Նվազագույն աշխատավարձի շարունակական բարձրացում
		Մեծահասակների շարունակական կրթություն
		Առողջապահական, սոցիալական ոլորտներին տրվող անվճար աջակցությունը՝ սոցիալական արդարության սկզբունքի վրա կառուցում

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
		Բժշկական ապահովագրության համակարգի աստիճանաբար ներդրում
		Որոշակի բժշկական միջամտությունների ու միջոցների բացառապես անվճար հիմքերով իրականացում
		Կոնկրետ ձեռնարկություններին հարկային արտոնությունների տրամադրում
		Կրթական հաստատությունների կառավարմանը պետության մասնակցության նվազեցում
		Մշակութային օբյեկտների պահպանում եւ բարեկարգում
		Մշակույթի ազատականացում և անկախացում պետության հովանավորչությունից

7.2 «Լուսավոր Հայաստան» կուսակցություն/ համաներկայական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Լուսավոր Հայաստան» կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաներկայական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

«Լուսավոր Հայաստան»/Եվրոպական ձախերի կուսակցություն (Party of European Left)

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հիմնականում չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ջափազոց **Եվրոպական ձախերի կուսակցության** գաղափարական դրույթների հետ:

- ԼՀԿ-ի ուսումնասիրված ծրագրում բացակայում են Եվրոպական ձախերի կուսակցության ծրագրում արտացոլված այն առանցքային դրույթները եւ արժեքները, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, ալտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն:
- ԼՀԿ-ի ուսումնասիրված ծրագրում բացասական երանգով չեն արտահայտված կամ բացակայում են Եվրոպական ձախերի կուսակցության համար բացասական համարվող այնպիսի երեւոյթներ, հասկացոյթուններ կամ ենթադրյալ իրողոյթուններ, ինչպիսիք են՝ կապիտալիստական շահագործումը, կապիտալիստական հասարակոյթունը, շուկայական արժեքները, նեոլիբերալ քաղաքականոյթունը, ԱՄՆ հեգեմոնիան, ազատ մրցակցոյթամբ շուկայական տնտեսոյթունը:
- Երկու կուսակցոյթունների ծրագրերում առկա գաղափարական դրույթների նմանոյթուններից կարելի է նշել այն, որ երկու կուսակցոյթուններն էլ կարեւորում են սոցիալական արդարոյթունը:

«Լուսավոր Հայաստան»/Եվրոպական դեմոկրատական կուսակցոյթուն (The European Democratic Party)

«Լուսավոր Հայաստան» կուսակցոյթան ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները որոշ դեպքերում համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածոյթան, կենտրոնամետ **Եվրոպական դեմոկրատական կուսակցոյթան** մոտեցումներին, սակայն նրանց գաղափարական բնոյթի դրույթներում քիչ չեն նաեւ

տարբերությունները:

- «Լուսավոր Հայաստան» կուսակցության ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են դիտարկվել Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, ազատությունը, իննովացիան, տնտեսական մրցակցությունը, անվտանգությունը, բնապահպանությունը:
- ԼՀԿ-ի ուսումնասիրված ծրագրերում եւ Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում որպես առաջնային նշված խնդիրների եւ բացասական երեւույթների ցանկում քիչ են համընկնումները: Համընկնումներից են՝ բյուրոկրատական մեքենան, աղքատությունը: Ի տարբերություն Եվրոպական դեմոկրատական կուսակցության, «Լուսավոր Հայաստան» կուսակցության համար առաջնային խնդիրներից են, օրինակ՝ սոցիալական բեւեռվածությունը եւ սոցիալական անարդարությունը, հովանավորչությունը, ստվերային տնտեսությունը: «Լուսավոր Հայաստանը», ի տարբերություն Եվրոպական դեմոկրատական կուսակցության, մեծ արժեք է տալիս պետական մշակութային գաղափարախոսության առկայությանը, ազգային արժանապատիվ ինքնության համակարգի գոյությանը, ամուր եւ առողջ ընտանիքին եւ ավելի մեծ տեղ է հատկացնում պետական աջակցության տարատեսակ ծրագրերին, մանր եւ միջին բիզնեսին տրվող հարկային արտոնություններին:

«Լուսավոր Հայաստան»/Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում (European Christian Political Movement)

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ծրագրում առկա որոշ մոտեցումներ համընկնում են աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության ծրագրային դրույթներին, բայց

նրանց ծրագրերի միջև կան նաեւ գաղափարական բնույթի տարբերություններ:

- Համընկնումների մասով՝ ինչպես ԵԲԲԸ-ն, այնպես էլ ԼՀԿ-ն, կարելու է օրենքի գերակայությունը եւ ժողովրդավարությունը, ներդրումները իննովացիոն տնտեսության մեջ, ներառական տնտեսական աճը, բնապահպանական տնտեսությունը: Երկու կուսակցությունների բացասական երեւոյթների ցանկի մեջ զգալի տեղ է զբաղեցնում անհարկի վարչարարությունը:
- Սակայն ԵԲԲԸ-ն որպէս կարելորագոյն խնդիրներ, որպէս բացասական երեւոյթներ է հիշատակել, օրինակ՝ ռադիկալ ձախական ակտիվիստական հասարակական կազմակերպությունները: Նման խմբերը Հայաստանում նույնպէս ակտիվ են, որոնք, սակայն ԼՀԿ-ի համար խնդիր չեն համարվում: ԼՀԿ-ի համար որպէս խնդիր չեն դիտարկվել նաեւ ԵԲԲԸ-ի կողմից որպէս բացասական երեւոյթներ նշված անհատապաշտ պահպանողական ազատականությունը եւ տեխնոկրատական սոցիալ-դեմոկրատիան: ԵԲԲԸ-ն որպէս իր համար կարելորագոյն արժեք նշում է մարդկային արժանապատվության քրիստոնեական մոտեցումը եւ ցուցաբերում է վառ ընդգծված հակակրանք իսլամի վերաբերյալ: ԼՀԿ-ն ավելի հանդուրժող հռետորաբանություն է ցուցաբերում, սակայն նույնպէս կարելու է կոնկրետ մեկ արժեհամակարգ՝ «արժանապատիվ ազգային ինքնության արժեհամակարգը»: Միեւնույն ժամանակ ԼՀԿ-ն «լիբերալ արժեքները» հռչակում է որպէս իր համար կարելորագոյն արժեքներ:
- ԵԲԲԸ-ն նաեւ կարելու է «առողջ եւ ուժեղ ընտանիքը» որպէս հասարակության կարելոր բջիջ, հատուկ ընդգծելով, որ ընտանիքը տղամարդու եւ կնոջ միջեւ միությունն է: ԼՀԿ-ն նույնպէս հատուկ կարելորություն է տալիս ընտանիքին, ընդգծելով ամուր եւ առողջ ընտանիքի կարելորությունը:

«Լուսավոր Հայաստան»/«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն) (Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Լուսավոր Հայաստան» կուսակցության եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող կենտրոնամետր «Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցության ծրագրերում կան որոշակի ընդհանրություններ, սակայն քիչ չեն նաեւ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ իրենց ծրագրերում կարելուորում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, ժողովրդավարությունը, ազատությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը: Երկուսն էլ կարելուորում են տնտեսական մրցակցությունը, տնտեսության ներառական աճը, աշխատատեղերի ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, կոռուպցիայի դեմ պայքարը, քաղաքացիական համերաշխության եւ անվտանգության ապահովման հարցերը, լիբերալիզմը: Երկու կուսակցություններն էլ դեմ են տնտեսական հովանավորչությանը եւ ուռճացված պետական կառավարման համակարգին:
- Սակայն ԼՀԿ-ի կողմից կարելուորվող խնդիրների, բացասական երեւույթների ցանկում գերիշխում են սոցիալական իրավունքների իրացմանը խոչընդոտող այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են՝ սոցիալական անարդարությունը, սոցիալական բեւեռվածությունը, սովերային տնտեսությունը, մինչդեռ ԵԱԺԴ-ի ծրագրի նշված խնդիրների շարքում մեծ տեղ են զբաղեցնում ազատ առետորին, մարդու քաղաքական եւ քաղաքացիական իրավունքների իրացմանը խոչընդոտող երեւույթներ, ինչպիսիք են պրոտեկցիոնիզմը, ազգայնականությունը, ապատեղեկատվությունը, ավտորիտարիզմը, գենդերային հիմքով բռնությունը, սեռական ոտնձգությունները եւ այլն: Եթե ԼՀԿ-ն շեշտադրում է տարբեր սոցիալ-տնտեսական բնույթի հարցերում պետական

միջամտության կարելիությունը, բիզնեսի համար արդար միջավայրի ստեղծումը, ապա ԵԱԺԴ-ն ընդգծում է ազատ շուկայի եւ ազատ առեւտրի կարելիությունը:

«Լուսավոր Հայաստան»/«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն (ԻԺԿ) (Identity and Democracy)

«Լուսավոր Հայաստան» կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային-պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերը մի շարք հարցերում համընկնում են, սակայն շարժ են նաեւ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ մեծ նշանակություն են տալիս, աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը եւ ներդրումների ներգրավմանը: Երկուսն էլ դեմ են ավելորդ բյուրոկրատիային:
- ԻԺԿ-ն, ինչպես եւ ԼՀԿ-ն, շեշտադրում է ընտանեկան արժեքներ եւ ազգային ինքնություն, ազգային շահեր հասկացությունները: Սակայն ԻԺԿ-ն, օրինակ, բացասական երանգով է հիշատակում էմիգրանտներին եւ խոսում է պահպանողական եվրոպական արժեքների կարելիության մասին, մինչդեռ ԼՀԿ-ն նշում է ուղղակի եվրոպական արժեքների եւ լիբերալ գաղափարների կարելիության մասին: ԼՀԿ-ի օգտագործվող լեզվամթերքը հանդուրժողական բնույթի է: ԼՀԿ-ի կողմից կարելիվող մի շարք երեւոյթներ, ինչպիսիք են սոցիալական արդարությունը, ազատական բարեփոխումները, շքեղության հարկը, տեղ չեն գտել ԻԺԿ-ի ծրագրային դրույթներում:

«Լուսավոր Հայաստան»/Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն (European Conservatives and Reformists Party)

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ծրագրային դրույթներում թեեւ կան մի շարք ընդհանրություններ աջակողմյան, ազգային-պահպանողական եվրոպական պահպանողականների եւ

բարեփոխիչների կուսակցության ծրագրում արտացոլված որոշակի սկզբունքների հեղ, սակայն, սոցիալ-տնտեսական բնույթի որոշ հարցերում ԼՀԿ-ի մոտեցումները տարբերվում են այդ կուսակցության մոտեցումներից:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր ասել, որ օրենքի իշխանությունն ու իրավունքի գերակայությունը, առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ընտանիքի ինստիտուտին, ներկայացուցչական ժողովրդավարությանը:
- Սակայն ԵՊԲԿ-ի սոցիալ-տնտեսական հարցերի վերաբերյալ մոտեցումները տարբերվում են ԼՀԿ-ից: Օրինակ, ի տարբերություն ԼՀԿ-ի, ԵՊԲԿ-ն հանդես է գալիս հանրային ծախսերի խիստ կրճատման, հարստության հարկի վերացման օգտին: Մինչդեռ ԼՀԿ-ն ճիշտ հակառակ դիրքորոշում ունի այս հարցերի վերաբերյալ:

«Լուսավոր Հայաստան»/«Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Լուսավոր Հայաստան» կուսակցության եւ ծախական, ծախկենտրոնամետ, կանաչ գաղափարախոսություն ունեցող **«Եվրոպայի Կանաչներ»** կուսակցության ծրագրերում առկա են բազմաթիվ նույնական դրույթներ, սակայն շատ են նաեւ էապես տարբերվող մոտեցումները:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր ասել, որ հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ ներառական եւ բարգավաճող հասարակություն, բոլորի համար հավասար իրավունքներ, ազատություն, սոցիալական համերաշխություն, սոցիալական արդարություն, կանաչ տնտեսություն, փոքր բիզնես:
- Սակայն, ի տարբերություն ԼՀԿ-ի, որը բացառապես դրական լույսի ներքո է նշել լիբերալիզմը, ԵԿԿ-ն որպես չափազանց բացասական երեւույթներ է դիտարկում՝ նեոլիբերալիզմը, կոշտ խնայողությունների քաղաքականությունը, հսկա մուլտինացիոնալ կազմակերպությունները, խոշոր կորպորացիաները, նշելով, որ ձեռնարկատերերը տուժում են

վերջիններիս հետ անարդար հարկային մրցակցությունից: ԵԿԿ-ն նաեւ շատ ավելի ավելի մեծ տեղ է տալիս տարբեր խոցելի խմբերի իրավունքներին, գենդերային հավասարությանը, բաց հասարակության կարելությունը, ընդգծում է մշակութային բազմազանության եւ փողոցային պայքարի, մասնակցային ժողովրդավարության կարելությունը, մինչդեռ ԼՀԿ-ն, ի տարբերություն ԵԿԿ-ի, շեշտադրում է ներկայացուցչական ժողովրդավարության, պետական մշակութային գաղափարախոսության անհրաժեշտության, ամուր եւ առողջ ընտանիքի, ազգային ինքնության արժեհամակարգի կարելությունը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը եւ ձախ-կենտրոնամետ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը իրենց ծրագրերում ունեն մի շարք ընդհանրություններ, սակայն նրանց մոտեցումներում քիչ չեն նաեւ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ կարելում են իրավահավասարությունը, քաղաքացիական համերաշխությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, իննովացիաները, ներառական հասարակությունը, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեւեռվածության հաղթահարումը, կոռուպցիայի դեմ պայքարը, հարկային բեռը դեպի խոշոր բիզնես վերաբաշխումը:
- Սակայն ԵՍԿ-ի հիմնարար խնդիրների, բացասական երեւոյթների ցանկում մեծ տեղ է հատկացվում ֆինանսական կապիտալիզմին, կլիմայական փոփոխություններին, խիստ խնայողության քաղաքանակությանը (austerity): ԵՍԿ-ն որպես բացասական երեւոյթներ հատուկ նշում է նաեւ աջ-ձայրահեղական ազգայնական պոպուլիզմը, կապիտալի

շուկայից կառավարության կախվածությունը:

- ԵՍԿ-ն, ի տարբերություն ԼՀԿ-ի, նաեւ որպես կարեւորվող կամ/եւ նպատակային եւ դրական երեւոյթներ է դիտարկում՝ ձեռնարկւթյուններէ շահույթի արդար բաշխումը բոլոր աշխատողների միջեւ, ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, հիմնարար սոցիալական իրավունքների գերիշխանությունը տնտեսական ազատությունների նկատմամբ, արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը:

«Լուսավոր Հայաստան»/Եվրոպական Ժողովրդական կուսակցություն (European people's party)

«Լուսավոր Հայաստան» կուսակցության եւ աջ-կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական Եվրոպական Ժողովրդական կուսակցության ծրագրերում կան մի շարք ընդհանրություններ:

- Երկու կուսակցություններն էլ կարեւոր են համարում պայքարը աղքատության, ավելորդ բյուրոկրատիզացիայի դեմ: Երկուսն էլ կարեւորում են կայուն, ներառական տնտեսական աճը եւ տնտեսական մրցակցությունը, ազատությունը եւ մարդու իրավունքները, իրավահավասարությունը եւ քաղաքացիական համերաշխությունը, հավասար հնարավորությունները, իննովացիաները, աշխատատեղերի ստեղծման խթանումը, մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացումը: ԵԺԿ-ն, ինչպես ԼՀԿ-ն, հատուկ ուշադրության է արժանացնում ընտանիքին եւ ընտանեկան արժեքներին:
- ԼՀԿ-ն եւ ԵԺԿ-ն կարեւորում են լիբերալ դեմոկրատիան: ԵԺԿ-ն որպես իր համար հարազատ տնտեսության ձեւ ընդգծում է սոցիալական շուկայական տնտեսությունը: ԼՀԿ-ն այդ եզրը չի օգտագործում, սակայն այդ հասկացութայնը մոտ այնպիսի սկզբունքներ է կարեւորում, ինչպիսիք են՝ սոցիալական արդարությունը, բիզնեսի զարգացման համար արդար պայմանների ստեղծումը, շքեղութայն հարկի ներդրումը:
- ԵԺԿ-ն ի տարբերություն ԼՀԿ-ի, քննադատում է այլ իզմերը,

մասնավորապես, կոմունիզմը, սոցիալիզմը, ռադիկալ
ինվայրնմենթալիզմը, լիբերտարիանիզմը:

Հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները կարող ենք նշել, որ «Լուսավոր Հայաստան» կուսակցության ծրագրում միաժամանակ գերիշխում են սոցիալ-դեմոկրատական եւ քրիստոնեա-դեմոկրատական դրույթները, սակայն այդ գաղափարախոսություններին բնորոշ որոշ սկզբունքային տարրեր բացակայում են ԼՀԿ-ի մոտ, ինչը դժվարացնում է «Լուսավոր Հայաստան» կուսակցության գաղափարախոսության բացահայտումը: Այնուամենայնիվ, կարող ենք նշել, որ «Լուսավոր Հայաստան» կուսակցության ծրագրում առկա մի շարք գաղափարներ ավելի շատ մոտ են չափավոր պահպանողականությանը եւ ծախ-կենտրոնամտությանն ու աջ-կենտրոնամտությանը միաժամանակ:

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



8.1 Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրի գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորև ներկայացրած աղյուսակը կազմված է Հայաստանի հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելով ող խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
Խաղաղության դիմաց տարածքներ	Ուժեղ բանակ, Ազգ-բանակ	Առողջապահության ոլորտում ծախսերի օպտիմալացում, պարտադիր ապահովագրման հայեցակարգի ներմուծում
	Սփյուռքահայության վերադարձը հայրենիք	Սպայական ծառայության սոցիալական երաշխիքների ուժեղացում, զոհված զինծառայողների ընտանիքներին բարոյական, հոգեբանական եւ նյութական աջակցության ընդլայնում
	Արժանապատիվ ծերություն	Հայաստանի երկարաժամկետ շահերից բխող արտաքին քաղաքականություն

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ
	Ավանդական ընտանիքի արժեքներ	Մարդկային կապիտալի զարգացում
		Արտահանման խրախուսում
		Փոքր եւ միջին ձեռնարկության խրախուսում
		Բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծմանը նպաստող քաղաքականություն

8.2 Հայաստանի հանրապետական կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք Հայաստանի հանրապետական կուսակցության նախընտրական ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/«Եվրոպական Ձախեր» կուսակցություն (Party of European Left)

Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները բացարձակապես չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ջատագով **Եվրոպական Ձախերի** ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ:

- ՀՀԿ-ի ուսումնասիրված ծրագրում բացակայում են «Եվրոպական Ձախեր» կուսակցության ծրագրում արտացոլված այնպիսի առանցքային դրույթներ եւ

արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, ալտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն:

- ՀՀԿ-ի ուսումնասիրված ծրագրում բացասական երանգով չեն արտահայտված կամ բացակայում են ԵԶԿ-ի համար բացասական համարվող այնպիսի երեւոյթներ, հասկացություններ կամ ենթադրյալ իրողություններ, ինչպիսիք են՝ կապիտալիստական շահագործումը, կապիտալիստական հասարակությունը, շուկայական արժեքները, նեոլիբերալ քաղաքականությունը, ԱՄՆ հեգեմոնիան, ազատ մրցակցությամբ շուկայական տնտեսությունը:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հիմնականում չեն համընկնում սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետր Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում առկա մոտեցումներին:

- ՀՀԿ-ի ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային չեն դիտարկվել Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, ազատությունը, սոլիդարությունը, գենդերային հավասարությունը, իշխանությունների տարանջատումը, իննովացիան, բնապահպանությունը: Չեն համընկնում նաեւ խնդիրները եւ գաղափարական բնույթի նպատակները:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրում տնտեսությանը վերաբերող առկա որոշ մոտեցումներ համընկնում են աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության ծրագրային դրույթներին:

- Ինչպես ԵԲԲՇ-ն, այնպես էլ ՀՀԿ-ն, կարելի էրոմ են «առողջ եւ ուժեղ ընտանիքը»:

«Հայաստանի հանրապետական կուսակցություն»/«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱՄԴ կուսակցություն)(Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

Հայաստանի հանրապետական կուսակցությունը եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող, կենտրոնամետ եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինքը ունեն շատ քիչ ընդհանրություններ եւ, մեծամասամբ, նրանց գաղափարները տարբերվում են:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էրոմ են հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, մարդկանց հմտությունների զարգացումը:
- Սակայն մնացած բոլոր հարցերում կուսակցությունների հեռտորաբանությունը, գաղափարները տարբերվում են:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն (ԻԺԿ) (Identity and Democracy)

Հայաստանի հանրապետական կուսակցության եւ

Ճայրահեղ աջ, ազգային-պահպանողական «**Ինքնություն եւ ժողովրդավարություն**» կուսակցության ծրագրերում կան նմանություններ:

- Երկու կուսակցություններն էլ մեծ նշանակություն են տալիս աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը, կարեւորում են «ընտանեկան արժեքները»:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն (European Conservatives and Reformists Party)

Հայաստանի հանրապետական կուսակցության ծրագրային դրույթներում կան որոշ ընդհանրություններ աջակողմյան, ազգային պահպանողական **Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցության** որոշակի սկզբունքների հետ, բայց սոցիալ-փնտրեսական բնույթի հարցերում առկա են տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ընտանիքի ինստիտուտին:
- Սակայն, ի տարբերություն ՀՀԿ-ի, ԵՊԲԿ-ն հանրային ծախսերի խիստ կրճատման կողմնակից է:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/«Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

Հայաստանի հանրապետական կուսակցության եւ ձախական, ձախ-կենտրոնամետ, կանաչ գաղափարախոսություն ունեցող **Եվրոպայի Կանաչների** ծրագրերում առկա գաղափարախոսական դրույթները էապես տարբերվում են միմյանցից:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))

Հայաստանի հանրապետական կուսակցության եւ ծախ-կենտրոնամետ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող **Եվրոպական սոցիալիստների կուսակցության** ծրագրերի միջեւ չկա գրեթե ոչ մի ընդհանրություն:

Հայաստանի հանրապետական կուսակցություն/Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)

Հայաստանի հանրապետական կուսակցությունը եւ աջ-կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցությունը** ունեն մի շարք ընդհանրություններ:

- Երկու կուսակցություններն էլ կարելի է համարում աշխատատեղերի ստեղծումը, մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացումը: Երկուսն էլ հատուկ ուշադրության են արժանացնում «ընտանիք» եւ «ընտանեկան արժեքներ» հասկացություններին:

Հարկ ենք համարում նշել, որ բազմաթիվ կարելի էր հարցերի վերաբերյալ ՀՀԿ-ի ծրագրում առկա չէ որեւէ մոտեցում: ՀՀԿ-ի ծրագիրը կրում է շատ սպեցիֆիկ բնույթ ու չի կարող համարվել լիարժեք նախընտրական ծրագիր: Սակայն, հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները՝ կարող ենք եզրակացնել, որ ծրագրում առկա այն եզակի գաղափարները մոտ են ազգային-պահպանողականությանը եւ աջ-կենտրոնամետությանը:

9. «ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



9.1 «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության ծրագրի գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորև ներկայացրած աղյուսակը կազմված է «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելովոլո խնդիրներ, բացասական երեւույթներ	Դրական երեւույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Ապագային ուժերի սադրանքներ	Հայ մարդ	Ազատ քաղաքացիների հզոր եւ արդար երկրի կառուցում
Հասարակության բեւեռացում	Հայություն	Պետական արդյունավետ միջամտում
Արտագաղթ	Ազգային	Եկամուտների արդար բաշխում
Շուկայական տարերային մոտեցում	Սոցիալիստական	Երկրի կայուն եւ առաջանցիկ զարգացում
Շուկայի անտեսանելի ձեռք	Ժողովրդավար	Պրոգրեսիվ հարկային քաղաքականության ներդնում
Մենաշնորհներ	Բարոյականություն	Կոոպերատիվների ստեղծում

Կարելով ով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Սոցիալական բեւեռացում	Արդարություն	Հողերի կամավոր խոշորացում
Բնական ռեսուրսների գերշահագործում	Մարդու արժանապատվություն եւ իրավունքներ	Հանրային ծառայության սոցիալական փաթեթից օգտվողների շրջանակի ընդլայնում
Ամբոխավարություն	Ազգային արժեքներ	Կոռուպցիայի դեմ պայքարող անկախ մարմնի ստեղծում
Նեոլիբերալ քաղաքականություն	Սոցիալական արդարություն	Բացառապես ազգային շահի հիման վրա արտաքին քաղաքականություն
Վայրի մրցակցություն	Պատասխանատու պետություն	
Անբարեխիղջ մրցակցություն	Համերաշխ հասարակություն	
Շահերի բախում	Տնտեսական բարեկեցություն	
Միակողմանի զիջումներ	Սոցիալական երաշխիքներ	
Թուրք-ադրբեջանական տանդեմ	Սոցիալական շուկայական տնտեսակարգ	
	Արժանապատիվ աշխատանքի իրավունք	
	Մրցակցության արդար պայմաններ	
	Փոքր եւ միջին ձեռնարկություններ	
	Միացյալ Հայաստան	
	Հայամետ եւ հայաստանակենտրոն	
	Ազգ-բանակ հայեցակարգ	
	Համայն հայության ազգային նպատակներ	

9.2 «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն/Եվրոպական ձախերի կուսակցություն (Party of European Left)

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները որոշ չափով համընկնում են մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ջատագով **Եվրոպական ձախերի կուսակցության** ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ, սակայն մոտեցումներում կան նաեւ տարբերություններ:

- ՀՅԴ-ի ուսումնասիրված ծրագրում առկա են ԵԶԿ ծրագրում արտացոլված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն, սակայն բացակայում են Եվրոպական ձախերի կողմից արժեւորվող կոմունիզմը, ալտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը եւ այլ նմանատիպ հասկացություններ:
- ՀՅԴ-ի ծրագրում առկա են ԵԶԿ-ի համար բացասական համարվող այնպիսի երեւույթներ, հասկացություններ կամ ենթադրյալ իրողություններ, ինչպիսիք են՝ նեոլիբերալ քաղաքականությունը, ազատ մրցակցությամբ շուկայական տնտեսությունը (ՀՅԴ-ի ծրագրում այն ձեւակերպված է որպես

շուկայական տարերային մոտեցում, վայրի մրցակցություն):

- Սակայն ՀՅԴ-ի ծրագրում, ի տարբերություն Եվրոպական ձախերի ծրագրի, մեծ դեր է հատկացված այնպիսի ազգակենտրոն հասկացություններին, ինչպիսիք են՝ ազգային արժեքներ, համազգային նպատակներ, ազգաբանակ հայեցակարգ: Մինչդեռ Եվրոպական ձախերի շեշտադրումները բացառապես մարդակենտրոն են եւ ինտերնացիոնալ՝ մարդկային էմանսիպացիա, գենդերային հավասարություն, հումանիզմ, միջազգային սոլիդարություն եւ այլն:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն/ Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները որոշ չափով համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետ Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում առկա մոտեցումներին, սակայն երկու կուսակցությունների մոտեցումներում շատ են նաեւ տարբերությունները:

- ՀՅԴ-ի ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են դիտարկվել Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում նույնպես շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, սոցիալական տնտեսությունը:
- Սակայն, եթե ՀՅԴ-ն արժեւորում է սոցիալիզմը, քննադատում է նեոլիբերալիզմը եւ կարելի է ասել, որ ազգակենտրոն հասկացությունները, ապա Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրի քաղաքական լեզուն ավելի ինտերնացիոնալ եւ մարդակենտրոն է, մյուս կողմից էլ այն, թեւեւ ԵԴԿ-ն կարելի է ասել, որ սոցիալական շուկան, սակայն շեշտադրումներ է անում տնտեսական աճի, բիզնես մրցակցության վրա:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն /«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ծրագրում առկա մոտեցումները հիմնականում չեն համընկնում աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական **«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության** ծրագրային դրույթներին:

- ԵԲԲՇ-ն որպես կարելուագույն խնդիրներ, բացասական երևույթներ է հիշատակել, օրինակ՝ ռադիկալ ծախսական ակտիվիստական հասարակական կազմակերպությունները: Նման խմբերը Հայաստանում նույնպես ակտիվ են, որոնք, սակայն ՀՅԴ-ի համար խնդիր չեն համարվում եւ հակառակը դատելով սոցիալիզմի վերաբերյալ դրական դիրքորոշումից պետք է որ ողջունվեն նրա կողմից: ԵԲԲՇ որպես խնդիր է դիտարկել նաեւ տեխնոկրատ սոցիալ-դեմոկրատիան: ԵԲԲՇ-ն կողմնակից է հնարավորինս քիչ պետական կարգավորումների, ազատ առետրի եւ բաց շուկայական տնտեսությանը, մինչդեռ ՀՅԴ-ն սոցիալական շուկայի ջատագով է:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն /«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն) (Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող, կենտրոնամետ **«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցության** ծրագրերում գոյություն ունեն որոշ ընդհանրություններ, սակայն առկա են նաեւ էական տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ իրենց ծրագրերում կարելուում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, մարդու արժանապատվությունը, ժողովրդավարությունը:

Երկուսն էլ կարելի է անվերապա անհամեմատել և անհամեմատելի ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, քաղաքացիական համերաշխության եւ անվտանգության ապահովման հարցերը:

- Սակայն ՀՅԴ-ն արժեւորում է սոցիալիզմը եւ սոցիալական շուկան, մինչդեռ ԵԱԺԴ-ն ազատ շուկայի եւ ընդհանուր առմամբ լիբերալիզմի եւ լիբերալ արժեքների ջատագով է:
- ԵԱԺԴ-ն ավելի անձնակենտրոն արժեքների վրա է շեշտադրումներ անում, մինչդեռ ՀՅԴ-ի մոտ մեծ տեղ են զբաղեցնում ազգակենտրոն հասկացությունները:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն /«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն(ԻԺԿ) (Identity and Democracy)

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային- պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերը, չնայած որոշ հարցերում համընկնումների առկայությանը, էապես տարբերվում են միմյանցից:

- Երկու կուսակցություններն էլ կարելի է անհամեմատել և անհամեմատելի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը: Երկու կուսակցություններն էլ կարելի է անհամեմատել և անհամեմատելի ազգայնակենտրոն հասկացությունները:
- Սակայն ՀՅԴ-ի ծրագրի գաղափարական լեզուն, որոշակի բացառություններով հանդերձ, որոնք վերաբերվում են Թուրքիային եւ Ադրբեջանին, ավելի հանդուրժողական է, քան ԻԺԿ-ի հռետորաբանությունը: Բացի այդ, եթե ՀՅԴ-ն կարելի է անհամեմատել և անհամեմատելի սոցիալիզմը, սոցիալական շուկան, ապա ԻԺԿ-ն, օրինակ, բացասաբար է վերաբերվում դասական գաղափարախոսություններին, այդ թվում՝ սոցիալիզմին:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն /«Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն» (European Conservatives and Reformists Party)

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցության ծրագրային դրույթներում թեւեւ կան մի շարք ընդհանրություններ աջակողմյան, ազգային-պահպանողական **Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցության** որոշակի սկզբունքների հետ, սակայն որոշ էական գաղափարական հարցերում ՀՅԴ-ի մոտեցումները տարբերվում են ԵՊԲԿ-ի ծրագրում առկա մոտեցումներից:

- Երկու կուսակցություններն էլ կարելու է են՝ մարդու արժանապատվությունն ու ազգակենտրոն հասկացությունները:
- Սակայն ԵՊԲԿ-ն հանդես է գալիս հանրային ծախսերի խիստ կրճատման, հարստության հարկի վերացման օգտին, մինչդեռ ՀՅԴ-ն պրոգրեսիվ հարկային համակարգի, սոցիալական շուկայի կողմնակից է:

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն / «Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը եւ ծախս, ծախս-կենտրոնամետ, կանաչ գաղափարախոսություն ունեցող Եվրոպայի Կանաչները ունեն բազմաթիվ նույնական ծրագրային դրույթներ, սակայն նրանց ծրագրերում կան նաեւ էապես տարբերվող մոտեցումներ:

- Երկու կուսակցություններն էլ կարելու է են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ բոլորի համար հավասար իրավունքներ, սոցիալական արդարություն, մարդկային արժանապատվություն, սոցիալական համերաշխություն, փոքր բիզնես, պրոգրեսիվ հարկային համակարգ: Երկու կուսակցությունների համար հավասարապես առաջնային խնդիր է համարվում անհավասարությունը եւ որպես բացասական երեւոյթ է դիտարկվում նեոլիբերալիզմը:

- Սակայն ԵԿԿ-ն շատ ավելի խիստ բնապահպանական կարգավորումների կողմնակից է, քան ՀՅԴ-ն: Նաև ՀՅԴ-ն, ի տարբերություն ԵԿԿ-ի, մեծ կարեւորություն է տալիս ազգակենտրոն հասկացություններին:

**«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն/
Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))**

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը եւ ծախկենտրոնամետ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող «Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը» ունեն մի շարք ծրագրային գաղափարական ընդհանրություններ, սակայն նրանց մոտեցումներում կան նաև տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ կարելի է ասել որ իրավահավասարությունը, քաղաքացիական համերաշխությունը, ժողովրդավարությունը, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեւեռվածության հաղթահարումը, սոցիալական շուկայական տնտեսությունը, պրոգրեսիվ եւ արդար հարկային համակարգը:
- Սակայն ԵՍԿ-ն, ի տարբերություն ՀՅԴ-ի, որպես հիմնարար խնդիրներ, բացասական երեւոյթներ է դիտարկում կլիմայական փոփոխությունները, աջ-ծայրահեղական ազգայնական պոպուլիզմը:
- ԵՍԿ-ն, ի տարբերություն ՀՅԴ-ի, նաև որպես կարելի է ասել կամ/եւ նպատակային եւ դրական երեւոյթներ է դիտարկում՝ ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը:

**«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն/
Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)**

«Հայ Հեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը **եւ աջ-կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական եվրոպական ժողովրդական կուսակցությունը** ունեն մի շարք ընդհանրություններ, սակայն նրանց ծրագրերում քիչ չեն նաեւ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ որպես դրական երեւոյթներ կարելի է քաղաքացիական համերաշխությունը, հավասար հնարավորությունները, աշխատատեղերի ստեղծումը, երկուսն էլ կողմ են մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը:
- Ի տարբերություն ՀՅԴ-ի, ԵԺԿ-ն կարելի է «լիբերալ դեմոկրատիա» հասկացությունը եւ հստակ քննադատում է սոցիալիզմը, մինչդեռ ՀՅԴ-ի համար, հակառակը, հենց սոցիալիզմն է հարազատ «իզմը»: Սակայն, միեւնույն ժամանակ երկուսի համար էլ արժեքավոր է «սոցիալական շուկայական տնտեսություն» հասկացությունը:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՅԴ-ն ոչ բոլոր կարելի հարցերի վերաբերյալ է նշել իր դիրքորոշումը եւ դա դժվարացնում է նրա գաղափարախոսության ստույգ բացահայտումը: Սակայն, այնուամենայնիվ, հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները կարող ենք նշել, որ ՀՅԴ-ին առավել մոտ են ձախ-կենտրոնամետությունը եւ ազգային-պահպանողականությունը:

10. «ՍԱՍՆԱ ԾՈՒՐ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



10.1 «Սասնա ծուր» համահայկական կուսակցության գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորև ներկայացրած աղյուսակը կազմված է «Սասնա ծուր» համահայկական կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելիվոր խնդիրներ, բացասական երեւոյթներ	Դրական երեւոյթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրոյթներ, նպատակներ
Ազգադավ եւ հանցավոր ռեժիմ	Ապստամբության իրավունք	Լյուստրացիայի կատարում
Մասնավոր շահերից բխող օրենքներ	Բլրքչեյն տնտեսություն	Թալանված հարստության վերադարձ ժողովրդին
Աղքատություն	Գիտահենք արդյունաբերություն	Պետական կառավարման համակարգի օպտիմալացում
Օտարի միջամտություն	4-րդ արդյունաբերական հեղափոխություն	Կադրերի ազգային շտեմարանի ձեւավորում

Կարելով ով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Նյութապաշտություն-իշխանատենչություն	Կանաչ տնտեսություն	Պետական աջակցություն նորարարության զարգացմանը
Թուրքական լուծ	Արժանապատիվ կյանք	Ռազմավարական ենթակառուցվածքների և օբյեկտների նկատմամբ ազգային վերահսկողության իրականացում
Ռուսական լուծ, ռուսական գաղութատիրություն	Ազգ-բանակ	Հողմային եւ արեւային էլեկտրակայարանների ստեղծում
Հայաստանյան ռուսահպատակ քաղաքական դաս, գաղութային վարչակազմ	Արարատյան մարդու առաքելություն	Գյուղացիական տնտեսություններին սուբսիդավորում
	Արարչության լույս	Ներդրումներ եւ ռազմավարական ծրագրեր խթանող հարկային քաղաքականություն
	Արդարություն	Հարկային արձակուրդ փոքր եւ միջին բիզնեսին
	Արարչագործության տարածք	Արտոնյալ հարկային արձակուրդ SS ոլորտում
	Ազգային իղձեր	Սոցիալական բնակարանաշինության ծրագրերի իրականացում
	Երջանկություն	Ծնելիության խրախուսում

Կարելովոլո խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
	Նոր հայ	Փարիզի 1920 թ. Վեհաժողովի որոշումների և Վիլսոնյան իրավարար վճռի դրույթների ոգուն համապատասխան Արցախի միավորում եւ նոր հանրապետության ստեղծում
	Լուսի եւ արդարության քաղաքական մշակույթ	Հայկական բարձավանդակի վերատիրում
	Ազգային, ինքնիշխան, ժողովրդավարական և համահայկական պետություն	Ռազմավարական ոլորտների նկատմամբ ազգային վերահսկողության հաստատում
	Ազատ եւ արժանապատիվ գոյություն	
	Հայակենտրոնություն եւ հայաստանակենտրոնություն	
	Մարդակենտրոնություն եւ քաղաքացիակենտրոնություն	
	Հասարակական համերաշխություն	
	Ազգային պետություն	
	Անմիջական ժողովրդավարություն	
	Ժողովրդի կամք	
	Տնտեսական պաշարների եւ ստեղծվող հարստության արդար եւ օրինական բաշխում	
	Դատավորների ժողովրդական ընտրություն	
	Մարդու հիմնարար իրավունքներ ու ազատություններ	

10.2 «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/Եվրոպական ձախերի կուսակցություն (Party of European Left)

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները բացարձակապես չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ցարագով **Եվրոպական ձախերի կուսակցության** ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ:

- ՍԾՀ-ի ուսումնասիրված ծրագրում բացակայում են Եվրոպական ձախերի կուսակցության ծրագրում արտացոլված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, ալտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն:
- «Սասնա ծռեր» կուսակցության ուսումնասիրված ծրագրում բացասական երանգով չեն արտահայտված կամ բացակայում են Եվրոպական ձախերի կուսակցության համար բացասական համարվող այնպիսի երեւույթներ, հասկացություններ կամ ենթադրյալ իրողություններ, ինչպիսիք են՝ կապիտալիստական շահագործումը, կապիտալիստական հասարակությունը, շուկայական արժեքները, ԱՄՆ հեգեմոնիան, ազատ մրցակցությամբ շուկայական տնտեսությունը:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

*«Սասնա ծռեր» համահայկական կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները որոշ չափով համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետր **Եվրոպական դեմոկրատական կուսակցության** ծրագրում առկա մոտեցումների հետ, սակայն մի շարք կարեւորագույն հարցերի վերաբերյալ առկա է մոտեցումների էական տարբերություն:*

- «Սասնա ծռեր» կուսակցության ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են դիտարկվել Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, ազատությունը, նորարարությունը, թվային տնտեսությունը, կանաչ տնտեսությունը: Երկու կուսակցություններն էլ կարեւորագույն խնդիրների շարքում նշել են աղքատությունը եւ երկուսն էլ պետության սոցիալական դեր ունենալու կողմնակից են:
- Սակայն Սասնա ծռերը ավելի մեծ դեր է տալիս անմիջական ժողովրդավարությանը եւ կարեւորում է «ժողովրդական կամք» հասկացությունը, մինչդեռ ԵԴԿ-ն շեշտը դնում է իրավունքի գերակայության եւ իշխանությունների տարանջատման սկզբունքի կարեւորության վրա:
- Ի տարբերություն Եվրոպական դեմոկրատական կուսակցության, ՍԾՀԿ-ն իր ծրագրում շեշտադրում է այնպիսի ազգակենտրոն, ազգայնական եւ հոգեւոր-մշակութային հասկացություններ, ինչպիսիք են՝ ազգ-բանակ, արարատյան մարդու առաքելություն, արարչության լույս, արարչագործության տարածք, նոր հայ, լույսի եւ արդարության քաղաքական մշակույթ, ազգային պետություն:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցության ծրագրի որոշ մոտեցումներ համընկնում են աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական **«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում»** կուսակցության ծրագրային դրույթներին, սակայն, հիմնականում սոցիալ-փնտրեսական բնույթի հարցերում առկա են մոտեցումների տարբերություններ:

- Համընկնումների մասով՝ ինչպես ԵԲԲԾ-ն, այնպես էլ ՍԾՀ-ն, կարելի էր համարել ժողովրդավարությունը, ներդրումները իննովացիոն տնտեսության մեջ, բնապահպանական տնտեսությունը: Երկուսն էլ մի շարք շեշտադրումներ են արել հոգեւոր-բարոյական բնույթի հասկացությունների վրա:
- Սակայն ԵԲԲԾ-ն շեշտադրում է ազատ առեւտուրը եւ բաց շուկայական տնտեսությունը, մինչդեռ ՍԾՀ-ն իր ծրագրում կարելի էր հարստության արդար բաշխումը:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն)(Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող, կենտրոնամետ **«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք»** կուսակցությունը ունեն որոշակի ընդհանրություններ, սակայն քիչ չեն նաեւ, ինչպես սոցիալ-փնտրեսական, այնպես էլ սոցիալ-մշակութային հարցերի շուրջ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ իրենց ծրագրերում կարելի էր համարել իրար հակադրող, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, մարդու արժանապատվությունը, ժողովրդավարությունը, ազատությունը, թվային իննովացիաները, աշխատատեղերի ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, կոռուպցիայի դեմ պայքարը, քաղաքացիական համերաշխության եւ անվտանգության ապահովման հարցերը:
- Սակայն, եթե ԵԱԺԴ-ն շեշտադրում է ազատ շուկան,

լիբերալիզմը, կապիտալի ազատ հոսքը, ապա ՄԾՀ-ն կարելուք է հարստության արդար բաշխումը: ԵԱԺԴ-ն ավելի անձնակենտրոն մոտեցումներ ունի, մինչդեռ Սասնա ծռերը նաեւ կարելուք է ազգակենտրոն եւ պահպանողական բնույթ հոգեւոր-մշակութային-բարոյա-էթիկական հասկացությունները:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն(ԻԺԿ) (Identity and Democracy)

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերը մի շարք հարցերում համընկնում են:

- Երկու կուսակցություններն էլ մեծ նշանակություն են տալիս կոռուպցիայի դեմ պայքարին, աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը եւ ներդրումների ներգրավմանը: Երկուսն էլ կարելուք են ազգային միասնությունն ու ինքնուրույնությունը: ԻԺԿ-ն կարելուք է «պատրիոտիզմ» հասկացությունը, ՄԾՀ-ն նույնպէս մեծ տեղ է հատկացնում ազգակենտրոն հասկացություններին:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/«Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն» (European Conservatives and Reformists Party)

«Սասնա ծռեր» կուսակցության ծրագրային դրույթներում կան որոշակի ընդհանրություններ աջակողմյան, ազգային-պահպանողական Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցության որոշակի սկզբունքների հետ, սակայն որոշ, հիմնականում, սոցիալ-փոփոխական բնույթի խնդիրների հարցում առկա է մոտեցումների տարբերություն:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր են ազգակենտրոն եւ բարոյա-էթիկական հասկացությունները:
- Սակայն ԵՊԲԿ-ն, ի տարբերություն ՍԾՀԿ-ի, հանդես է գալիս հանրային ծախսերի խիստ կրճատման, հարստության հարկի վերացման օգտին, ազատ շուկայի օգտին եւ այլն:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/«Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը եւ ծախ, ծախ-կենտրոնամետր, կանաչ գաղափարախոսություն ունեցող «Եվրոպայի Կանաչներ» կուսակցությունը իրենց ծրագրերում ունեն մի շարք նույնական դրույթներ, սակայն շատ են նաեւ էապես տարբերվող մոտեցումները:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ բոլորի համար հավասար իրավունքներ, ազատություն, մարդկային արժանապատվություն, սոցիալական համերաշխություն, փոքր բիզնես, հարստության արդար բաշխում, կանաչ տնտեսություն: Երկուսն էլ էգոիզմը, նյութապաշտությունը դիտարկում են որպես կարելիորագույն խնդիրներ:
- Սակայն Եվրոպայի կանաչները սոցիալ-մշակութային հարցերում կարելի էր են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ գենդերային հավասարությունը, բաց հասարակությունը, կանանց հզորացումը, սեքսուալ եւ ռեպրոդուկտիվ առողջությունը, սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը եւ այլն եւ ինտերնացիոնալ բնույթի շեշտադրումներ են անում: Մինչդեռ Սասնա ծռերը մեծ ուշադրություն է դարձնում ազգակենտրոն եւ պահպանողական հոգեւոր-մշակութային հասկացություններին:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists)

(PES))

*«Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը եւ ձախկենսորոնամեզ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող **Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը** իրենց ծրագրերում ունեն մի շարք ընդհանրություններ, սակայն նրանց մոտեցումներում քիչ չեն նաեւ տարբերությունները:*

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր ասել քաղաքացիական համերաշխությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, ինովացիաները, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեւեռվածության հաղթահարումը, արդար հարկային համակարգը, հարստության արդար բաշխումը:
- ԵՍԿ-ի ծրագրում, ի տարբերություն ՄԾՀԿ-ի ծրագրի, առկա են ռադիկալ ձախական սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, ինչպիսիք են՝ ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, հիմնարար սոցիալական իրավունքների գերիշխանությունը տնտեսական ազատությունների նկատմամբ եւ այլն:
- ԵՍԿ-ի մշակութային քաղաքական լեզուն ավելի ինտերնացիոնալ եւ մարդակենտրոն է, իսկ Սասնա ծռերինը՝ ավելի ազգակենտրոն եւ պահպանողական:

«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն/Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)

*«Սասնա ծռեր» համահայկական կուսակցության եւ աջկենսորոնամեզ, լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցության** ծրագրերում կան մի շարք ընդհանուր գաղափարական դրույթներ, սակայն որոշ հարցերում առկա են նաեւ էական տարբերություններ:*

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր ասել քաղաքացիական համերաշխությունը, հավասար հնարավորությունները, ինովացիաները, աշխատատեղերի

ստեղծումը, մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացումը: Երկու կուսակցություններն էլ կարելի էր են ճշմարտություն հասկացությունը:

- Ի տարբերություն ՍԾՀ-ի, ԵԺԿ-ն առանձին ընդգծում է «լիբերալ դեմոկրատիա» հասկացության կարելիությունը, մինչդեռ ՍԾՀ-ն ընդգծում են անմիջական ժողովրդավարությունը:

Հարկ է նշել, որ մի շարք կարելի էր հարցերի վերաբերյալ «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության ծրագրում չկա պարզաճ անդրադարձ, ինչը դժվարացնում է կուսակցության գաղափարախոսության բացահայտումը, սակայն, հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները՝ կարող ենք եզրակացնել, որ «Սասնա ծռեր» համահայկական կուսակցությանը առավել մոտ են ազգային-պահպանողականությունը եւ չափավոր ձախականությունը:

11. «ՔԱՂԱՔԱՑՈՒ ՈՐՈՇՈՒՄ» ՄՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



11.1 «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորև ներկայացրած աղյուսակը կազմված է «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Ավտորիտար համակարգ	Կայուն ժողովրդավարություն	Համակարգային ժողովրդավարական փոփոխությունների անհրաժեշտություն
Օլիգարխիա	Համընդհանուր բարեկեցության պետություն	Ուղիղ ժողովրդավարության մեխանիզմների պարզեցում եւ ընդունում
Միջակցային անհավասար պայմաններ	Արդյունքի արդար բաշխում	Հնարավորինս պետության միջամտությունը դարձել հիմնավորված եւ արդյունավետ
Կորզող հաստատություններ եւ գործիքներ	Հանրային հարաբերությունների արդարություն	Շուկայի ապամենաշնորհում

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Վատ վարչարարություն	Սոցիալական արդարություն	Մետաղական արդյունաբերության հետմղում
Մշակութային հիերարխիաներ	Մարդու իրավունքներ	Պարտադիր առողջապահական համակարգի ներդրում
Կլանային, արտոնյալ փոքր խմբեր	Մարդու բարեկեցություն	Ցածր եկամուտ ստացողների ցածր տոկոսադրույքով հարկում
Մետաղական հանքեր	Սոցիալական շուկայական տնտեսություն	Աշխատանքային վեճերի լուծման այլընտրանքային գործառույթների տրամադրում արհմիություններին
Գյուղատնտեսության ավանդական ձեռքեր	Մասնակցայնություն	Կրթության և գիտության համար բյուջեի առնվազն 4,5%-ի չափով ֆինանսավորում
Եկամտի եւ հնարավորությունների անհավասարություն	Խաղի հավասար պայմաններ	Գիտության ֆինանսավորման ավելացում
Լիբերալ կապիտալիզմ	Կայուն եւ ներառական տնտեսական աճ	Համընդհանուր և պարտադիր պետական բժշկական ապահովագրության ներդրում
Կրիմինալ հեղինակություններ եւ տարաբնույթ հանցավոր խմբեր	Հավասար մրցակցային պայմաններ	Մշակույթի որոշակի բազմազանության եւ ապակենտրոնացման ապահովում
Յուրաքանչյուր քաղաքացու համար բարեկեցիկ ապրելու հնարավորություն	Յուրաքանչյուր քաղաքացու համար բարեկեցիկ ապրելու հնարավորություն	Մարդը և մյուս բոլոր կենսաբանական օրգանիզմների ու բնության տարերի ներդաշնակության ապահովում
	Պետական հոգածություն	Բնօգտագործման վճարների փոխ առ փոխ բարձրացում

Կարելով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
	Արհմիություններ	Պետական կապիտալ ներդրումներով էկոբիզնեսի խթանում
	Սոցիալական գործընկերություն	Պետության կողմից բիզնեսի կարգավորում ի օգուտ հանրության շահի
	Աշխատավորական սոցիալական շարժում	
	Գենդերային իրավահավասարություն	
	Բարոյական՝ ճշմարիտի, գեղեցիկի և բարու վրա հիմնված իդեալներ	
	Տեղական մշակույթը որպես համաշխարհային մշակույթի մաս	
	Արժանապատիվ աշխատանքի իրավունք	
	Կանաչ տեխնոլոգիաներ	
	Էկոբիզնես	
	Բնական, էկոլոգիապես մաքուր արտադրանք	
	Արեւային եւ վերականգնվող այլ էներգատեսակներ	

11.2 «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

**«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն/
Եվրոպական ծախերի կուսակցություն (Party of European Left)**

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները որոշ չափով համընկնում են մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ջատագով **Եվրոպական ծախերի կուսակցության** ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ, սակայն քիչ չեն նաեւ էական տարբերությունները:

- ՔՈՍԴԿ-ի եւ ԵԶԿ-ի ծրագրերում արտացոլված են այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը եւ սոցիալական արդարությունը, սոցիալական իրավունքների վրա շեշտադրումները, գենդերային հավասարությունը եւ այլն: Եվրոպական ծախերի կուսակցության ծրագրում որպես բացասական երեւոյթ նշվել է կապիտալիստական շահագործումը: ՔՈՍԴԿ-ի ծրագրի բացասական երեւոյթների շարքում նշված են վերոնշյալին մոտ հասկացություններ, ինչպիսիք են՝ կորզող ինստիտուտները եւ լիբերալ կապիտալիզմը:
- Սակայն ԵԶԿ-ն քննադատում է սոցիալ-դեմոկրատիան, մինչդեռ ՔՈՍԴԿ-ի համար այդ հասկացությունը մի քանի անգամ դրական երանգով է նշվում, բացի այդ, այն արտացոլված է կուսակցության անվանման մեջ: ԵԶԿ-ն, ի տարբերություն ՔՈՍԴԿ-ի, կարեւորում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը: Մինչդեռ ՔՈՍԴԿ-ի համար դրական երեւոյթներ են սոցիալ-դեմոկրատական կապիտալիզմը, սոցիալական շուկայական տնտեսությունը:

«Քաղաքացու որոշում» կուսակցություն/Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

*«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները բազմաթիվ հարցերում համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետր **Եվրոպական դեմոկրատական կուսակցության** ծրագրում առկա մոտեցումներին, սակայն կան նաև մոտեցումների որոշակի տարբերություններ:*

- ՔՈՍԴԿ-ի ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են դիտարկվել ԵԴԿ-ի ծրագրում նույնպես շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, արժանապատիվ աշխատանքը, կանաչ տնտեսությունը, գենդերային հավասարությունը: Երկուսն էլ պետությանը սոցիալական մեծ դեր տալու, սոցիալական տնտեսության կողմնակից են: Երկու կուսակցություններն էլ կարեւորագույն խնդիրների շարքում նշել են աղքատությունը, վատ վարչարարությունը, ավտորիտարիզմը:
- Սակայն, եթե, օրինակ, ԵԴԿ-ն շեշտադրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, իրավունքի գերիշխանությունը եւ ազատությունը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, ապա ՔՈՍԴԿ-ն ավելի մեծ դեր է տալիս անմիջական ժողովրդավարությանը, մասնակցայնությանը, սոցիալ-դեմոկրատական ավանդույթներին, հաշվետվողականությանը: Եթե ԵԴԿ-ն սոցիալ-տնտեսական բնույթի հարցերի շարքում, օրինակ, կարեւորում է գների կայունությունը եւ առետրի (թեկուզ եւ ոչ ամեն տեսակի առետրի) սատարումը, տնտեսական աճն ու բիզնես մրցակցությունը, նվազագույն եկամտի, թոշակի ապահովումը, ապա ՔՈՍԴԿ-ն շեշտը դնում է արդյունքի արդար բաշխման, սոցիալական արդարության, կայուն եւ ներառական տնտեսական աճի, հավասար մրցակցային պայմանների, արհմիությունների մեծ դերի վրա եւ այլն:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն /«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի մոտեցումները բազմաթիվ հարցերում չեն համընկնում աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության ծրագրային դրույթներին:

- ԵԲԲԾ-ն շեշտադրում է ազատ առևտուրը եւ բաց շուկայական տնտեսությունը, մինչդեռ ՔՈՍԴԿ-ն կարելի է հարստության արդար բաշխումը եւ սոցիալական շուկայական տնտեսությունը: ԵԲԲԾ-ի կողմից նշված բացասական երեւյթներից մեկը սոցիալ-դեմոկրատիան է, որը կուսակցությունը որպես տեխնոկրատական է բնորոշում, մինչդեռ սոցիալ-դեմոկրատիան ՔՈՍԴԿ-ի հոչակած գաղափարախոսությունն է: Մշակութային բնույթի հարցերում, ի տարբերություն ՔՈՍԴԿ-ի, ԵԲԲԾ-ի լեզուն առավել քան անհանդուրժողական է եւ պահպանողական է:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն /«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն)(Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող կենտրոնամետ «Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցությունը իրենց ծրագրերում ունեն որոշակի ընդհանրություններ, սակայն քիչ չեն նաեւ ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ սոցիալ-մշակութային հարցերի մասով տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ իրենց ծրագրերում կարելի է են այնպիսի արժեքներ եւ երեւույթներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, մարդու արժանապատվությունը,

ժողովրդավարությունը, աշխատատեղերի ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, քաղաքացիական համերաշխությունը, բոլորի համար հավասար եւ արդար պայմանները, գենդերային հավասարությունը:

- Սակայն, եթե ԵԱԺԴ-ն շեշտադրում է ազատ շուկան, լիբերալիզմը, լիբերալ-դեմոկրատիան, կապիտալի ազատ հոսքը, ապա ՔՈՍԴԿ-ն կարելի է հարստության արդար բաշխումը, սոցիալական շուկան, սոցիալ-դեմոկրատիան:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն /«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն (ԻԺԿ) (Identity and Democracy)

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերում առկա գաղափարները մեծամասամբ փարբերվում են իրենց էությանը:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն/ Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն (European Conservatives and Reformists Party)

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության եւ աջ, ազգային պահպանողական Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցության ծրագրերում առկա գաղափարները մեծամասամբ փարբերվում են իրենց էությանը:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն /«Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը եւ ձախ, ձախ-կենտրոնամետ, կանաչ գաղափարախոսություն ունեցող «Եվրոպայի կանաչներ» կուսակցությունը իրենց ծրագրերում ունեն

մի շարք նույնական գաղափարական դրույթներ, սակայն նրանց մոտեցումներում կան նաեւ որոշակի տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ բոլորի համար հավասար իրավունքներ, մարդկային արժանապատվություն, սոցիալական համերաշխություն, սոցիալական արդարություն, հարստության արդար բաշխում, կանաչ տնտեսություն, մարդու բարեկեցություն, էական սոցիալական իրավունքներ, պարտադիր առողջապահական համակարգ, հարկային արդարություն, արժանապատիվ եկամուտ, արհեստակցական միություններ:
- Սակայն ԵԿԿ-ն, ի տարբերություն ՔՈՍԴԿ-ի, ընդգծում է նաեւ այնպիսի հասկացություններ եւ երեւույթներ, ինչպիսիք են՝ բաց հասարակությունը, կանանց հզորացումը, սեքսուալ եւ ռեպրոդուկտիվ առողջությունը, սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը եւ այլն, ինչպես նաեւ շեշտադրումներ են անում ինտերնացիոնալ բնույթի հարցերի վրա:

**«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն/
Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))**

*«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության եւ ծախ-կենտրոնամետ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող **Եվրոպական սոցիալիստների կուսակցության** ծրագրերում առկան գաղափարական դրույթները մեծամասամբ համընկնում են, սակայն կան որոշակի տարբերություններ:*

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են քաղաքացիական համերաշխությունը, ժողովրդավարությունը, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեւեռվածության հաղթահարումը, արդար հարկային համակարգը, հարստության արդար բաշխումը, սոցիալ-դեմոկրատիան, համընդհանուր բարեկեցության պետությունը, հավասարությունն եւ արդարությունը, սոցիալական

շուկայական տնտեսությունը, հաշվետվողականությունը, կայուն եւ ներառական տնտեսական աճը:

- Սակայն ԵՍԿ-ի ծրագրում, ի տարբերություն ՔՈՍԴԿ-ի, առկա են ռադիկալ ճախական սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, ինչպիսիք են, օրինակ՝ ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, ինչպես նաեւ ԵՍԿ-ի մշակութային քաղաքական լեզուն ավելի ինտերնացիոնալ է:

«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն/ Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)

*«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության եւ աջ-կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցության** ծրագրերում առկա գաղափարական դրույթներից շարքերը նույնական են, սակայն կան նաեւ որոշակի էական տարբերություններ:*

- Երկու կուսակցություններն էլ կարելի է համարում աղքատության դեմ պայքարը: Երկուսն էլ կարելի է համերաշխությունը, հավասար հնարավորությունները, աշխատատեղերի ստեղծումը, կայուն եւ ներառական տնտեսական աճը, արդարությունը, սոցիալական արդարությունը: Երկու կուսակցություններն էլ կարելի է համարում են բարոյականություն եւ ճշմարտություն հասկացությունները:
- Ի տարբերություն ՔՈ-ի, ԵԺԿ-ն կարելի է «լիբերալ դեմոկրատիա» հասկացությունը, իշխանությունների տարանջատումը, իրավունքի գերակայությունը, մինչդեռ ՔՈՍԴԿ-ի համար նախընտրելի կոնցեպցիան սոցիալ-դեմոկրատիան է, բացի այդ ՔՈՍԴԿ-ն նաեւ կարելի է անմիջական ժողովրդավարությունը:

Հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները կարող ենք եզրակացնել, որ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրում արտահայտված գաղափարախոսությունն է՝ չափավոր ազատականությունը եւ ձախ-կենտրոնամտությունը: Նկատվում է նաեւ որոշ հարցերում այդ ուղղություններին ոչ բնորոշ դրույթների առկայություն:

12. «ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



12.1 «Ժառանգություն» կուսակցության գաղափարախոսական մոդելները արտացոլող աղյուսակը

Ստորեւ ներկայացրած աղյուսակը կազմված է «Ժառանգություն» կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելիվոր խընդիրներ, բացասական երեւոյթներ	Դրական երեւոյթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրոյթներ, նպատակներ
Քաղաքացու աղքատություն	Մարդու արժանապատվություն եւ հիմնարար իրավունքներ	Գործարարության համար հավասար պայմանների ստեղծում
Ավտորիտար իշխանությունների կողմից քաղաքացուն որպես ճորտ վերաբերվելը	Ազգային շահ	Ազգային եկամտի արդար եւ հասցեական բաշխում
Իշխանությունն ամեն գնով պահելու մարմաջ	Օրենքի առջեւ բոլորի հավասարություն	Գիտելիքահենք տնտեսության ստեղծում
Օլիգարխիկ խմբեր	Ինքնիշխանություն	Ապրանքների եւ ծառայությունների մատուցման շուկաներում պետական վերահսկողության բարձրացում

Կարելովող խընդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Համակարգային բնույթի կոռուպցիա	Ժողովրդավարություն	Պետության կողմից կուսակցությունների աջակցության ավելացում
Հետամնաց գավառական կապիտալիզմ	Բարեկեցություն	Բնական մենաշնորհների արդար եւ արդյունավետ կարգավորում, արհեստական մենաշնորհների դեմ պայքարի ուժեղացում
Օլիգոպոլիա	Իրավունքի գերակայություն	Դեպի Հայաստան մեծ վերադարձի ապահովում
Մարդու իրավունքների խախտումներ	Սոցիալական արդարություն	Փոքր եւ միջինի բիզնեսի հարկային բեռի թեթեացում
Հասարակական անբարո եւ ցոփ բարքեր	Սոցիալական շուկայական տնտեսություն	Շքեղության միանվագ հարկի կիրառում
Տեղ չհասնող պետական աջակցություն	Միջին խավ	Պարզ, կայուն ու կանխատեսելի հարկային դաշտ
Իշխանության եւ խոշոր բիզնեսի սերտաճում	Եվրոպական տիպի ժամանակակից ժողովրդավարական սոցիալական պետություն	Տարեկան 10-15 տոկոս տնտեսական աճ փոքր եւ միջին բիզնեսի հաշվին
Խտրականություն	Ազգային իրավունքներ	Պրոգրեսիվ հարկային օրենսդրության ներմուծում
Խոշոր ընկերությունների դեմպինգային քաղաքականություն	Հավասար հնարավորությունների հասարակություն	Անապահով խավի աշխատանքային իրավունքի ապահովում
	Սոցիալական արդարություն եւ սոցիալական համերաշխություն	Գործազրկության կրճատում ապա եւ բացառում
	Ազատականություն եւ սոցիալական պարտավորություններ	Առողջ ապրելակերպի արմատավորում

Կարելով խընդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
	Բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող անհատ	Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական հաստատություններում ուսանող կարիքավոր ուսանողների համար արտոնյալ կրթական վարկերի տրամադրում
	Սոցիալական շուկա	Պետպատվերով բուժօգնությունը հավելի հասցեական եւ արդար դարձնումը
	Մանր եւ միջին բիզնես	Կրթության ֆինանսավորումը ՀՆԱ-ի 5,5% հասցնելը
	Ազգապահպանություն	Կրթության ոլորտում հարկային բեռի պակասեցում
		Մշակութային հաստատությունների նկատմամբ պետության հոգաձության մեծացում
		Արդյունահանող ձեռնարկությունների անցում բաց բաժնետիրական ընկերությունների

12.2 «Ժառանգություն» կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Ժառանգություն» կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

«Ժառանգություն» կուսակցություն/Եվրոպական ձախերի կուսակցություն (Party of European Left)

«Ժառանգություն» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հիմնականում չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ջատագով Եվրոպական ձախերի կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական դրույթների հետ:

- Նմանությունների մասով կարող ենք նշել միայն, որ երկու կուսակցություններն էլ կարելի էր են ժողովրդավարությունը եւ սոցիալական արդարությունը:
- ԺԿ-ի ուսումնասիրված ծրագրում բացակայում են ԵԶԿ-ի ծրագրում արտացոլված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ սոցիալիզմը, կոմունիզմը, ալտեր-գլոբալիստական շարժումը, այլընտրանքային, ռադիկալ, բնապահպանական եւ ֆեմինիստական ձախականությունը, հավասարության սկզբունքի հիման վրա կառուցված հասարակությունը եւ այլն:
- ԺԿ-ի ուսումնասիրված ծրագրում բացասական երանգով չեն արտահայտված կամ բացակայում են ԵԶԿ-ի համար բացասական համարվող այնպիսի երեւույթներ, հասկացություններ կամ ենթադրյալ իրողություններ, ինչպիսիք են՝ կապիտալիստական հասարակությունը, շուկայական արժեքները, նեոլիբերալ քաղաքականությունը, ԱՄՆ հեգեմոնիան, ազատ մրցակցությամբ շուկայական տնտեսությունը: ԺԿ-ն քննադատում է հետամնաց, գավառական կապիտալիզմը:

«Ժառանգություն» կուսակցություն/Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

«Ժառանգություն» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հաճախ համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետր Եվրոպական

դեմոկրատական կուսակցության ծրագրում առկա մոտեցումներին, սակայն դրանցում կան նաև որոշակի էական տարբերություններ:

- ԺԿ-ի ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են դիտարկվել ԵԴԿ-ի ծրագրում նույնպես շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ եւ արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, ազատությունը, սոլիդարությունը, իշխանությունների տարանջատումը, սոցիալական տնտեսությունը: ԺԿ-ի եւ ԵԴԿ-ի ծրագրերում որպես առաջնային նշված մի շարք խնդիրներ եւ բացասական երեւույթներ նույնական են: Դրանք են, օրինակ՝ ոչ ժողովրդավարական երեւույթները, աղքատությունը:
- Բայց, եթե, օրինակ, ԵԴԿ-ն շեշտադրում է բիզնես մրցակցությունն ու տնտեսական աճը, ապա ԺԿ-ն ավելի շատ խոսում է ազգային եկամտի արդար եւ հասցեական բաշխման, պրոգրեսիվ հարկային համակարգի ներմուծման անհրաժեշտության մասին: Բացի այդ ԺԿ-ն մեծ տեղ է տալիս ազգակենտրոն հասկացություններին, մինչդեռ ԵԴԿ-ի քաղաքական լեզվում գերիշխում են մարդակենտրոն հասկացությունները:

«Ժառանգություն» կուսակցություն/«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Ժառանգություն» կուսակցության եւ աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության ծրագրային դրույթները մեծամասամբ տարբեր են, սակայն մշակութային հարցերին վերաբերող մոտեցումների միջեւ կան որոշակի ընդհանրություններ:

- Եթե ԵԲԲԸ-ն կարելուրում է ազատ առետուրը, բաց շուկայական տնտեսությունը եւ հնարավորինս քիչ պետական կարգավորումները, ապա ԺԿ-ն սոցիալական շուկայի կողմնակից է եւ հանդես է գալիս ազգային հարստության արդար բաշխման օգտին:

- ԵԲԲՇ-ն որպես կարեւորագոյն խնդիրներ, բացասական երեւոյթներ է հիշատակել, օրինակ՝ ռադիկալ ծախական ակտիվիստական հասարակական կազմակերպութիւնները: Նման խմբերը Հայաստանում նույնպէս ակտիվ են, որոնք, սակայն ԺԿ-ի համար խնդիր չեն համարվում: Ժառանգութիւնը բացասական երեւոյթ չի համարել ԵԲԲՇ-ի կողմից որպէս բացասական երեւոյթներ նշված անհատապաշտ պահպանողական ազատականութիւնը եւ տեխնոկրատ սոցիալ-դեմոկրատիան:
- ԵԲԲՇ-ն որպէս իր համար կարեւորագոյն արժեք նշում է մարդկային արժանապատվոյան քրիստոնեական մոտեցումը: Ժառանգութեան մոտեցումը այս հարցում որոշակիորեն համահունչ է ԵԲԲՇ-ի դիրքորոշմանը՝ ԺԿ-ն իր կողմից կարեւորվող խնդիրների շարքում նշել է հասարակական անբարո եւ ցոփ վարքերը, կարեւորել է բարոյական բարձր արժեհամակարգ ունեցող անհատ լինելը:

«Ժառանգութիւն» կուսակցութիւն /«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցութիւն (ԵԱԺԴ կուսակցութիւն) (Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը եւ սոցիալ-ազատական ուղղվածութիւն ունեցող, կենտրոնամետ «Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցութիւնը իրենց ծրագրերում ունեն բազմաթիվ ընդհանրութիւններ:

- Երկու կուսակցութիւններն էլ իրենց ծրագրերում կարեւորում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, մարդու արժանապատվութիւնը, ժողովրդավարութիւնը, ազատութիւնը, իրավունքի գերակայութիւնը: Երկուսն էլ կարեւորում են աշխատատեղերի ստեղծման խթանումը, հոգատար պետութեան մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկութիւնների զարգացմանը խթանելը, կոռուպցիայի դեմ պայքարը, քաղաքացիական համերաշխութեան եւ անվտանգութեան ապահովման հարցերը, բոլորի համար հավասար եւ արդար հնարավորութիւնների ստեղծումը:

- Սակայն, եթե ԵԱԺԴ-ն կարելի է մրցակցությունը, ազատ առևտուրը, շուկայական տնտեսությունը, ապա ԺԿ-ն շեշտադրում է սոցիալական շուկան, ազգային հարստության արդար եւ հասցեական բաշխումը: Բացի այդ ԺԿ-ն նաեւ կարելի է ազգակենտրոն հասկացությունները, մինչդեռ ԵԱԺԴ-ն ընդգծված ուշադրություն է դարձնում մարդակենտրոն հասկացություններին:

«Ժառանգություն» կուսակցություն/«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն(ԻԺԿ) (Identity and Democracy)

«Ժառանգություն» կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերը, չնայած որոշ հարցերում համընկնումների առկայությանը, մի շարք հարցերում տարբերվում են միմյանցից:

- Երկու կուսակցություններն էլ մեծ նշանակություն են տալիս աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին բիզնեսի զարգացման խթանմանը եւ ներդրումների ներգրավմանը: Երկուսն էլ կարելի է ազգային միասնությունն ու ինքնուրույնությունը, ազգային շահերը:
- Սակայն, ի տարբերություն ԻԺԿ-ի, ԺԿ-ի հռետորաբանությունը հանդուրժողական բնույթ ունի եւ հիմնված է սոցիալական բնույթ ունեցող շեշտադրումների վրա:

«Ժառանգություն» կուսակցություն / Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն (European Conservatives and Reformists Party)

«Ժառանգություն» կուսակցության ծրագրային դրույթներում թեեւ կան որոշակի ընդհանրություններ աջակողմյան, ազգային պահպանողական Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն ծրագրում առկա որոշ սկզբունքների հետ, սակայն, հիմնականում, կուսակցությունների մոտեցումները տարբերվում են:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր են՝ ազատությունը, մարդու արժանապատվությունը, իրավունքի գերակայությունը, ազգային ինքնիշխանությունը:
- Սակայն ԵՊԲԿ-ն ազատ մրցակցության, ցածր հարկերի քաղաքականության կողմնակից է, հանդես է գալիս հանրային ծախսերի խիստ կրճատման, հարստության հարկի վերացման օգտին: Մինչդեռ ԺԿ-ն սոցիալական արդարության, հարստության հարկի, պրոգրեսիվ հարկային հարկային համակարգի կողմնակից է: Որոշ հարցերի վերաբերյալ կուսակցության անհանդուրժողական լեզուն նույնպես չի համընկնում ԺԿ-ի հռետորաբանության հետ:

«Ժառանգություն» կուսակցություն/Եվրոպայի Կանաչներ (European Greens)

«Ժառանգություն» կուսակցությունը եւ ծախական, ծախկենտրոնամետ, կանաչ գաղափարախոսություն ունեցող «Եվրոպայի Կանաչներ» կուսակցությունը իրենց ծրագրերում ունեն բազմաթիվ նույնական դրույթներ, սակայն քիչ չեն են նաեւ էապես տարբերվող մոտեցումները:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ բոլորի համար հավասար իրավունքներ, ազատություն, մարդկային արժանապատվություն, սոցիալական համերաշխություն, սոցիալական արդարություն, սոցիալական շուկա, մանր եւ միջին բիզնես, պրոգրեսիվ հարկային համակարգ:
- Սակայն ԵԿԿ-ն, շատ ավելի խիստ բնապահպանական կարգավորումների կողմնակից է, մեծ ուշադրություն է դարձնում գենդերային հավասարությանը, փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը: Ժառանգությունը, ի տարբերություն, ԵԿԿ-ի, նաեւ մեծ ուշադրություն է դարձնում ազգակենտրոն հասկացություններին:

«Ժառանգություն» կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))

«Ժառանգություն» կուսակցությունը եւ ձախ-կենտրոնամետ, սոցիալ-դեմոկրատական ուղղվածության **Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը** իրենց ծրագրերում ունեն մի շարք ընդհանրություններ, սակայն նրանց մոտեցումներում քիչ չեն նաեւ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ կարելի էր են իրավահավասարությունը, քաղաքացիական համերաշխությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, աշխատատեղերի ստեղծման անհրաժեշտությունը, աղքատության, սոցիալական բեռնվածության հաղթահարումը, տարատեսակ խտրականության դեմ պայքարը, սոցիալական շուկայական տնտեսությունը, պրոգրեսիվ հարկման համակարգը:
- Սակայն ԵՍԿ-ն, ի տարբերություն ԺԿ-ի ձգտում է այնպիսի ռադիկալ ձախական դրույթների իրականացմանը, ինչպիսիք են՝ ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, արժեքների վրա հիմնված արտաքին քաղաքականությունը: ԺԿ-ն մեծ ուշադրություն է դարձնում ազգակենտրոն հասկացություններին, մինչդեռ ԵՍԿ-ի հռետորաբանությունը ինտերնացիոնալ բնույթի է:

«Ժառանգություն» կուսակցություն/Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)

«Ժառանգություն» կուսակցությունը եւ աջ կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցության** գաղափարական դրույթները ունեն մի շարք էական ընդհանրություններ, սակայն առկա են նաեւ որոշակի տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ կարելի են համարում ազատությունը եւ մարդու իրավունքները, իրավահավասարությունը եւ քաղաքացիական համերաշխությունը, հավասար հնարավորությունները, աշխատատեղերի ստեղծումը, մանր եւ միջին

ձեռնարկությունների զարգացումը, սոցիալական շուկայական տնտեսությունը, սոցիալական արդարությունը:

- ԵԺԿ-ն ընդգծում է քրիստոնեական արժեքների պահպանության, իսկ ԺԿ-ն՝ բարոյական բարձր արժեհամակարգի պահպանության կարելիությունը:
- Սակայն, եթե ԵԺԿ-ն, սոցիալական շուկայական տնտեսությունից բացի կարելի է նաև մրցակցայնությունն ու կայուն աճը, ապա ԺԿ-ն ավելի շատ սոցիալական շեշտադրումներ ունի, օրինակ, նրա ծրագրում առկա է ազգային եկամտի արդար եւ հասցեական բաշխման դրույթ, գործազրկության կրճատումից հետո նաև վերջինիս բացառում:

Չնայած բազմաթիվ հարցերի վերաբերյալ «Ժառանգություն» կուսակցությունը իր ծրագրում դիրքորոշում չի հայտնել, ինչը դժվարացնում է ծրագրի հիման վրա կուսակցության գաղափարախոսության բացահայտումը, սակայն, հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները, կարող ենք եզրակացնել, որ Ժառանգությանը առավել մոտ են հավասարապես ձախկենտրոնամտությունը եւ աջ-կենտրոնամտությունը եւ չափավոր պահպանողականությունը:

13. «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ



13.1 «Հայ ազգային կոնգրես» կուսակցության գաղափարախոսական մոտեցումները արտացոլող աղյուսակը

Ստորեւ ներկայացրած աղյուսակը կազմված է «Հայ ազգային կոնգրես» կուսակցության նախընտրական ծրագրի վերլուծության հիման վրա, որի մեթոդը նկարագրված է հետազոտության մեթոդաբանությանը վերաբերող բաժնում:

Կարելով ով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Օտարի տիրապետություն	Ազատություն	Բնական պաշարների ողջամիտ օգտագործում
Քրեական աշխարհի հարաբերություններ	Հայ ժողովրդի ազգային ինքնության առանցքը կազմող ավանդական արժեքային համակարգը	Պետության կողմից որոշակի երաշխիքներ տրամադրողի եւ մեկնարկային հավասարություններ ապահովող ինստիտուտի գործառույթի ստանձնում
Արտաքին քաղաքական որեւէ կողմնորոշում՝ որպես ազգի հավերժական դիրքորոշում	Ժողովրդավարություն, մարդու իրավունքներ	Պետության նշանակալից միջամտություն

Կարելով ով խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
Մեծամասնության դիկտատուրա	Համաշխարհային լիբերալ կառույցներ	Արտադրության խթանմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացում
Բռնապետություն	Սոցիալ-ազատականություն	Փոքր եւ միջին բիզնեսի արագ զարգացում, միջին խավի տեսակարար կշռի բարձրացում
Հասարակության սուր շերտավորում	Ժողովրդի քաղաքական կամք	Բարիդրացիական հարաբերությունների ամրապնդումն ու խորացումն անմիջական հարեանների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Իրանի հետ, կառուցողական ջանքերի գործադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ.
Տնտեսության մենաշնորհացում	Արժանապատիվ կյանք	Զբաղվածության եւ ծնելիության խթանում
Սեփականության վերաբաշխում	Սոցիալական արդարություն	Պետության կողմից սոցիալական բնակարանային շինարարության ծրագրի իրականացում
	Օրենքի գերակայություն եւ բոլորի հավասարություն օրենքի առջեւ	Առողջապահության, կրթության, գիտության ոլորտներում պետական ծրագրերի դերի եւ տեսակարար կշռի մեծացում
	Իրավական եւ սոցիալական պետություն	

Կարելի է խնդիրներ, բացասական երևույթներ	Դրական երևույթներ, դրական արժեքներ	Առանցքային գաղափարական դրույթներ, նպատակներ
	Էթնիկական, կրոնական եւ մշակութային բազմազանություն	
	Ներկուսակցական ֆրակցիաներ	
	Ազատության եւ սոցիալական արդարության փոխկապակցվածություն	
	Պրոգրեսիվ հարկային քաղաքականություն	
	Շուկայական սոցիալական տնտեսություն	
	Մասնավոր սեփականության անձեռնմխելիություն	
	Հնարավորությունների հավասարություն	

13.2 «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/ համաեվրոպական կուսակցություններ

Ստորեւ կներկայացնենք «Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագրի եւ դիտարկվող համաեվրոպական կուսակցություններից յուրաքանչյուրի նախընտրական ծրագրերի համեմատական վերլուծությունը՝ համաձայն սույն հետազոտությունում նշված մեթոդաբանության:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/Եվրոպական ձախերի կուսակցություն (Party of European Left)

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագրում արտացոլված գաղափարական մոտեցումները հիմնականում չեն համընկնում մարքսիստական, ռադիկալ ձախակողմյան, դեմոկրատական

*սոցիալիզմի, կոմունիզմի գաղափարախոսությունների ջարդագով
Եվրոպական ձախերի կուսակցության ծրագրում արտացոլված
գաղափարական դրույթների հետ:*

- Սոցիալական արդարություն հասկացությունը ՀԱԿ-ի և ԵԶԿ-ի ծրագրերում հանդիպող գրեթե միակ համընկնող սկզբունքային գաղափարական կետն է:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/Եվրոպական դեմոկրատական կուսակցություն (The European Democratic Party)

*«Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագրում արտացոլված
գաղափարական մոտեցումները մի շարք էական հարցերի մասով
համընկնում են սոցիալ-ազատական ուղղվածության, կենտրոնամետր
Եվրոպական դեմոկրատական կուսակցության ծրագրում առկա
մոտեցումներին, սակայն կան նաև հարցեր, որոնց վերաբերյալ
առկա է մոտեցումների որոշակի փարբերություններ:*

- ՀԱԿ-ի ուսումնասիրված ծրագրում որպես առաջնային են դիտարկվել ԵԴԿ-ի ծրագրում շեշտադրված այնպիսի առանցքային դրույթներ և արժեքներ, ինչպիսիք են՝ ժողովրդավարությունը և մարդու հիմնարար իրավունքները, մարդկային արժանապատվությունը, իշխանությունների տարանջատման սկզբունքը, իրավունքի գերիշխանությունը և ազատությունը: Երկուսն էլ պետությանը սոցիալական մեծ դեր տալու, սոցիալական շուկայական տնտեսության կողմնակից են: Երկու կուսակցություններն էլ կարեւորագույն խնդիրների շարքում նշել են հասարակության սուր շերտավորումը, ավտորիտարիզմը:
- ՀԱԿ-ի ծրագրում, ի տարբերություն ԵԴԿ-ի ծրագրի, հիշատակված չէ, օրինակ, «կանաչ տնտեսություն» և «գենդերային հավասարություն» հասկացությունները (սա իհարկե դեռևս չի նշանակում, որ կուսացությունը չի կարեւորում դրանք): ՀԱԿ-ի ծրագրում առկա է ազգային-պահպանողական բնույթի հետեյալ դրույթը՝ «հայ ժողովրդի ազգային ինքնության առանցքը կազմող ավանդական արժեքային համակարգ»:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/«Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցություն (European Christian Political Movement)

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագրի մոտեցումները բազմաթիվ հարցերում չեն համընկնում աջ-կենտրոնամետ, սոցիալ-պահպանողական «Եվրոպական քրիստոնեական քաղաքական շարժում» կուսակցության ծրագրային դրույթներին:

- ԵԲԲԸ-ն շեշտադրում է ազատ առևտուրը եւ բաց շուկայական տնտեսությունը, մինչդեռ ՀԱԿ-ը կարելու է սոցիալական շուկայական տնտեսությունը եւ պետության նշանակալից միջամտությունը: Մշակութային բնույթի հարցերում, ի տարբերություն ՀԱԿ-ի, ԵԲԲԸ-ի լեզուն առավել քան անհանդուրժողական եւ պահպանողական է: Սոցիալ-մշակութային բնույթի հարցերում որոշակի նմանություն կա այն առումով, որ ԵԲԲԸ-ն կարելու է մարդկային արժանապատվության քրիստոնեական ընկալումը, իսկ ՀԱԿ-ը՝ «հայ ժողովրդի ազգային ինքնության առանցքը կազմող ավանդական արժեքային համակարգը»:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/«Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցություն (ԵԱԺԴ կուսակցություն) (Alliance of Liberals and Democrats for Europe Party (ALDE Party))

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության եւ սոցիալ-ազատական ուղղվածություն ունեցող, կենտրոնամետ «Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինք» կուսակցության ծրագրերում առկա գաղափարական դրույթներից շատերը մեծամասամբ համընկնում են, սակայն կան որոշակի տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ իրենց ծրագրերում կարելու են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, մարդու արժանապատվությունը, ժողովրդավարությունը, ազատությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը, լիբերալիզմը: Երկուսն էլ կարելու են աշխատատեղերի

ստեղծման խթանումը, հոգատար պետության մոդելը, փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացմանը խթանելը, հնարավորությունների հավասարությունը, բազմազանությունը:

- Մրցակցություն, ազատ առևտուր, բյուրոկրատիայի պարզեցում, մրցակցային տնտեսություն՝ այսպիսի հասկացությունները բացակայում են ՀԱԿ-ի ծրագրում: Ի տարբերություն ԵԱԺԴ-ի, ՀԱԿ-ն իր ծրագրում որպես դրական հասկացություններ ընդգծում է սոցիալական շուկայական տնտեսության մոդելը, պրոգրեսիվ հարկային քաղաքականությունը:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/«Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցություն(ԻԺԿ) (Identity and Democracy)

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության եւ ծայրահեղ աջ, ազգային պահպանողական «Ինքնություն եւ Ժողովրդավարություն» կուսակցության ծրագրերում առկա գաղափարները մեծամասամբ տարբերվում են իրենց էությունից:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցություն (European Conservatives and Reformists Party)

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության եւ աջակողմյան, ազգային-պահպանողական Եվրոպական պահպանողականների եւ բարեփոխիչների կուսակցության ծրագրերում առկա գաղափարները մեծամասամբ տարբերվում են իրենց էությունից:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/«Եվրոպայի Կանաչներ» կուսակցություն (European Greens)

«Հայ ազգային կոնգրես» կուսակցությունը եւ ծախական,

ձախ-կենտրոնամետր, կանաչ գաղափարախոսություն ունեցող «Եվրոպայի կանաչներ» կուսակցությունը իրենց ծրագրերում ունեն մի շարք նույնական գաղափարական դրույթներ, սակայն նրանց մոտեցումներում կան նաեւ որոշակի տարբերություններ:

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են հետեւյալ արժեքներն ու հասկացությունները՝ բոլորի համար հավասար իրավունքներ, մարդկային արժանապատվություն, սոցիալական արդարություն, մարդու բարեկեցություն, հարկային արդարություն, պրոգրեսիվ հարկային համակարգ, արժանապատիվ կյանք, փոքր եւ միջին բիզնեսին աջակցություն:
- Սակայն ԵԿԿ-ն, ի տարբերություն ՀԱԿ-ի, ընդգծում է նաեւ այնպիսի հասկացություններ եւ երեւոյթներ, ինչպիսիք են՝ բաց հասարակությունը, կանանց հզորացումը, հարստության արդար բաշխումը, արդար տնտեսությունը, կանաչ տնտեսությունը, սեքսուալ եւ ռեպրոդուկտիվ առողջությունը, սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը եւ այլն: Շեշտադրումներ է անում ինտերնացիոնալ բնույթի հարցերի վրա եւս:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/Եվրոպական սոցիալիստների կուսակցություն (Party of European Socialists (PES))

«Հայ ազգային կոնգրես» կուսակցության եւ ձախ-կենտրոնամետր, սոցիալ-դեմոկրատական ուղղվածություն ունեցող Եվրոպական սոցիալիստների կուսակցության ծրագրերում առկա գաղափարական դրույթների մի զգալի մասը նույնական են, սակայն քիչ չեն նաեւ տարբերությունները:

- Երկու կուսակցություններն էլ կարելուրում են սոցիալական բեւեռվածության հաղթահարումը, պրոգրեսիվ հարկային համակարգը, սոցիալական շուկայական տնտեսությունը, մշակութային բազմազանությունը:
- Սակայն, ԵՍԿ-ի ծրագրում, ի տարբերություն ՀԱԿ-ի ծրագրի,

առկա են ռադիկալ ձախական սոցիալ-տնտեսական բնույթի դրույթներ, ինչպիսիք են, օրինակ՝ ամբողջական զբաղվածությունը, համընդհանուր անվճար կրթությունը, ինչպես նաև ԵՍԿ-ի մշակութային քաղաքական լեզուն ավելի ինտերնացիոնալ է:

«Հայ ազգային կոնգրես» կուսակցություն/Եվրոպական ժողովրդական կուսակցություն (European people's party)

*«Հայ ազգային կոնգրես» կուսակցության եւ աջ-կենտրոնամետ, լիբերալ-պահպանողական **Եվրոպական ժողովրդական կուսակցության** ծրագրերում առկա գաղափարական դրույթներից շարքերը նույնական են, սակայն կան նաև որոշակի տարբերություններ:*

- Երկու կուսակցություններն էլ կարելի է համարում հավասար հնարավորությունները, սոցիալական արդարությունը, իշխանությունների տարանջատումը, իրավունքի գերակայությունը, սոցիալական շուկայական տնտեսությունը:
- ԵԺԿ-ի ծրագրում նաև կարելի է տեսնել հատկապես մրցակցայնությանը, տնտեսական աճին եւ հնարավորինս քիչ բյուրոկրատիային, մինչդեռ ՀԱԿ-ը կարելի է պետության նշանակալից միջամտությունը: Եթե ՀԱԿ-ը իրեն հոգեհարազատ է համարում սոցիալ լիբերալիզմը, ապա ԵԺԿ-ն՝ լիբերալ դեմոկրատիան:

Հիմք ընդունելով վերոնշյալ համեմատությունները՝ կարող ենք եզրակացնել, որ գաղափարական առումով «Հայ ազգային կոնգրես» կուսակցության ծրագիրը առավելապես մոտ է չափավոր պահպանողականությանը եւ ձախ-կենտրոնամետությանը, որոշ առումներով նաև աջ-կենտրոնամետությանը եւ չափավոր ազատականությանը: Նկատվում է նաև որոշ հարցերում այդ ուղղություններին ոչ բնորոշ դրույթների առկայություն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ դիտարկված հայաստանյան կուսակցությունների զգալի մասի ծրագրերի հիման վրա նրանց քաղաքական գաղափարախոսությունը բացահայտելը մեծապես դժվարանում է հիմնականում այն պատճառով, որ կուսակցությունները, որպես կանոն, խիստ սահմանափակ թվով հարցերի վերաբերյալ են ներկայացնում իրենց մոտեցումները, ինչն անհնարին է դարձնում բազմաթիվ կարելուագույն հարցերի վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումները պարզելը:

Նկատվում է նաեւ, որ նույնիսկ այն դեպքում, երբ հնարավոր է լինում բացահայտել հայաստանյան կուսակցությունների որդեգրած գաղափարախոսությունը, շատ հաճախ նրանք այդ կոնկրետ գաղափարախոսությանը ոչ բնորոշ դրույթներ են հռչակած լինում: Հարկ է նաեւ նշել, որ ի համեմատություն համաեվրոպական կուսակցությունների ծրագրերի, հայաստանյան կուսակցությունների ծրագրերում խնդրահարույց համարվող երեւույթների եւ հակառակորդ քաղաքական հոսանքների վերաբերյալ ավելի մեղմ հռետորաբանություն է կիրառվում: Որոշ դեպքերում, ծրագրում նշված հարցերը այն աստիճանի սահմանափակ են, որ տվյալ կուսակցությունը կարելի է համարել մեկ խնդրի շուրջ ստեղծված, ոչ դասական կուսակցություն:

Հատկանշական է, որ հետազոտված 9 հայաստանյան կուսակցությունների մեծ մասի ծրագրերում ամենից շատ ներկայացված են ձախ-կենտրոնամետ, սոցիալ դեմոկրատիային մոտ գաղափարներ: Ընդ որում, ի տարբերություն համաեվրոպական կուսակցությունների, դրանք, որպես կանոն, հաճախ զուգորդվել են ազգայնական, չափավոր պահպանողական հռետորաբանությամբ: Հետաքրքիր է նաեւ այն, որ որոշ դեպքերում կուսակցության ծրագրի ուսումնասիրության հիման վրա բացահայտված գաղափարախոսությունը տարբերվում է՝ ա) գաղափարախոսությունից, որը կուսակցությունը վերագրում է ինքն իրեն եւ բ) գաղափարախոսությունից, որը հանրությունն է վերագրում այդ կուսակցությանը:

Հետազոտված 9 հայաստանյան կուսակցություններից ձախ

կենտրոնամետությանը բնորոշ բազմաթիվ գաղափարներ են ունեցել «Հայ ազգային կոնգրես» կուսակցությունը, «Ժառանգություն» կուսակցություն, «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը, ԲՀԿ-ն, «Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը: «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը եւ ՀՅԴ-ն վառ ընդգծված ծախ-կենտրոնամետ ուղղվածություն ունեն: Քաղաքացիական պայմանագիրը եւ ՀՀԿ-ն ավելի մոտ են աջ-կենտրոնամետությանը, որոշ առումներով այս հոսանքին մոտ գաղափարներ ունեն նաեւ ՀԱԿ-ը եւ Ժառանգությունը:

Ձախ-կենտրոնամետությանը մոտ գաղափարներ ունեցող հայաստանյան կուսակցություններից Հայ ազգային կոնգրեսը, Ժառանգությունը, Լուսավոր Հայաստանը նաեւ, մեծամասամբ, չափավոր պահպանողականությանը մոտ դրույթներ ունեն, որոշ դեպքերում՝ չափավոր ազատականությանը մոտ դրույթներ: ԲՀԿ-ի ծրագիրը այս առումով թույլ չի տալիս որեւէ դատողություն անել: Ձախ-կենտրոնամետ գաղափարախոսություն ունեցող «Քաղաքացու որոշում» կուսակցությունը նաեւ չափավոր ազատական դիրքերում է: Ձախ-կենտրոնամետությանը բնորոշ գաղափարներ ունեցող ՀՅԴ-ն եւ «Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը նաեւ պահպանողական դիրքերում են: Աջ-կենտրոնամետ ՀՀԿ-ն նաեւ պահպանողական դիրքերում է: Աջ-կենտրոնամետ գաղափարներ ունեցող Քաղաքացիական պայմանագիրը նաեւ չափավոր ազատական դիրքերում է:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

	Աջ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ ՉՍԵՍՈՒՐ ԱՇՏԱՎԱՆ	Աջ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԱՆ ՉՍԵՍՈՒՐ	Աջ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ ՉՍԵՍՈՒՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԱՆ	Ձխ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ ՉՍԵՍՈՒՐ ԱՇՏԱՎԱՆ	Ձխ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԱՆ ՉՍԵՍՈՒՐ	Ձխ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ ՉՍԵՍՈՒՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԱՆ	Ձխ- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ (ՉԱՆԱՔԱՐ ՊԱՀՊԱՆՈՒՄԱՆ)
ՔՊ							
ԲՀԿ							
ԼՀԿ							
ՀՀԿ							
ՀՅԴ							
ՍԾՀԿ							
ՔՈՍԴԿ							
ԺԿ							
ՀԱԿ							

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ VS ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն աղյուսակը ներկայացնում է, թե դիտարկված հայաստանյան կուսակցությունների ծրագրերը գաղափարապես հր համաեվրոպական կուսակցությունների ծրագրերին են առավել մոտ:

	Մոնոթեզիսական, ուղիղ առևտրային	Մոթո- աշտակ, ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ	Մոթո- ուհուրուրուրու, Ա- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ	Մոթո- աշտակ, ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ	Ազատ ուհուրուրուրու, ՍԱՐԿԵՐ ԱՍԿՈՒՄԱՆ	Ազատ ուհուրուրուրու, ՊԱՀՊԱՆՈՒՄԱՆ ԱՍԿՈՒՄԱՆ	Կանա, զա- ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ, ՉՍԵՍՈՒՐ	Մոթո- աշտակ, ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ	Լիբերա- աշտակ, ՎԵՏՏՈՒՄԱՆՆԵՐ
	ԵԶԿ	ԵԴԿ	ԵԶԸԸ	ԵԱԺԴ	ԻԺԿ	ԵՊԲԿ	ԵԿԿ	ԵՍԿ	ԵԺԿ
ՔՊ									
ԲՀԿ									
ԼՀԿ									
ՀՀԿ									
ՀՅԴ									
ՍԾՀԿ									
ՔՈՍԴԿ									
ԺԿ									
ՀԱԿ									



Սույն հետազոտությունը պատրաստվել է
«Քաղաքական երկխոսություն» կազմակերպության
նախաձեռնությամբ և Նիդերլանդների Թագավորության ԱԳՆ-ի
ֆինանսական աջակցությամբ:

